

Universitäts- und Landesbibliothek Bonn

**Erek' t'agawor mogerow zroyc'n haykakan
matenagrowt'ean mêz ew anor kareworowt'iwnn**

Sargisean, Barseg

Venetik, 1910

urn:nbn:de:hbz:5:1-74140


Goussen
4°


3544

~~Goussen 3544~~

~~4~~

Goussen 4' 3544





ρ

ԵՐԵՎ

ԹԱԳԱՒՈՐ ՄՈՔԵՐՈՒ ԶՐՈՅՑՆ

ՅՈՒՆԻՍԿՈՒՆԻ ՄԱՍԻՆՆԵՐԻՆԻ ՄԻՋ

ԵՐ ԱՐՄԱՆԻԱՆ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ


ՈՍԿԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԼՂԻՐԱՆԻ Կ. ՍԵՂՆԱԿՅԱՆ

ՄԵԼՈՒՆԻՆԻ ՕՏԱՎԵՐ

ԵՐԵՎ

ԹԱԳԱՒՈՐ ՄՈՔԵՐՈՒ ԶՐՈՅՑՆ



ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ

ԳՅԳԳ

ՄԱՅՈՒՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ

Ե Ր Ե Ք

ԹԱԳԱԻՈՐ ՄՈԳԵՐՈՒ ԶՐՈՅՑՆ

ՀԱՅԿՍՏԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ


ԵՒ ԱՆՈՐ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ի

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



ՎԵՆԵՏԻԿ — ՍՈՒՐԲ ԳԱԶԱՐ

ՌՅԾԹ — 1910

3544

3544



(ՃԸ. Լ
հրատ
(տես
Բ. հա
267-Յ
զատն
շակել
կարդ
որոնք
են ան
ևլի կ
նակեն
կը տ
մամբ

1. «
բրած մե
հրատար
փափաք
շեալ զի
նամակոյ
Me
Mit J
folgend
Abhand
wieder
um der
betreffe
men w
Version
nicht a
Anlage
Da n
Erachte
sicht v

ԵՐԵՔ ԹԱԳԱԽՈՐ ՄՈԳԵՐՈՒ ԶՐՈՅՑՆ՝

Ինչ ծանօթ գրաւոր գրոյցներն հինգ հատ են թուով: Ասոնցմէ 3-4ը՝ որոնք կը գրաւուին Մայրավանացս թիւ 1095 (Լ. Ոսկեփ.), թիւ 456 (ԺԼ. Ճաւորնախր), թիւ 1447 (ԻԳ. Ճաւորն.), թիւ 569 (ԼԵ. Ճաւորն.) և թիւ 986 (ԺԼ. Ոսկեփ.) գրչագիրներուն մէջ, արդէն հրատարակուած են ի վեներաբլ 1898ամին (տես Թանգարան հայկ. հիւս. և եւր. քարգմ. Բ. հտ. Անկանոն Գիրք Նոր կտակ. եր. 267-306): Ուստի աւելորդ համարեցայ գասոնք ծայրէ ծայր ընդօրինակել, գուշակելով որ դուք անձամբ եւս պիտի ուզէք կարդալ զանոնք: Այս Զեռագիրներս, — որոնք ըստ իս ԺԳ. դարէն վերջ գրուած են անտարակոյս, — թէպէտեւ իրարմէ աւելի կամ պակաս միջադէպեր կը պարունակեն և մանրամասնութեանց մէջ իրարմէ կը տարբերին, սակայն ընդհանուր առմամբ ամէնքն ալ մէկ հասարակաց յաղ-

բերէ կը յառաջագային: Եւ այս բանիս յայտնի ապացոյց են՝ նախ և առաջ երեք Մոգերու (Թագաւորներ) անուանքն և աշխարհները, ուսկից կու գան. այսինքն « Գասպար՝ Թագաւորն Հնդկաց, Բաղդասար՝ Թագաւորն Արարացոց, և Մելքոն (նաեւ Մելգոն) Թագաւորն Պարսից »: Բ. Աստուծմէն Արամայ յանձնուած գրաւոր դաշինքը կամ խոստումը (դրախտէն արտաքսուելէն և Աբելի մահուանէն վերջ), թէ « ի վեցհազարերորդ ամի վեցերորդ օրն առաքեմ զմիածին Որդին իմ զԲանն Աստուած, որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումմէ, և լինի Որդին իմ՝ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ յառաջին փառան կանգնեսցէ », և այլն, զոր գրեալ և մատանեան Աստուծոյ կնքեալ՝ Մոգերը մանկացելոյն Յիսուսի կը ներկայացնեն որ բանայ: Գ. Ընծաները (ոսկի, կնդրուկ, զմուռ) Յիսուսի մատուցած և երկրպագութիւն ըրած ժամանակ (առանձինն) իւրա-

1. « Բագմավէպ » ի մէջ (թիւ 7 Յուլիս, եր. 291) ըրած մեր յայտարարութեան համաձայն կը փութանք հրատարակել մեր գրուածն ամբողջութեամբ, ինչպէս որ փափագ յայտնած էր մեզ հրատարակուած տեսնել յիշեալ զիտանականը, Ապրիլ 10 մեզի գրած հետեւեալ նամակովն այսպէս.

Mein theuerer und verehrter Freund,

Mit herzlichstem Danke lasse ich Ihnen beifolgend das Manuskript Ihrer vortrefflichen Abhandlung über die Dreikönige oder Magier wieder zugeben, nachdem dasselbe wesentlich um der Hauptsache noch (im Excerpte) in das betreffende Kunsthistorische Werk aufgenommen worden ist, allerdings nur in deutscher Version, da ein Abdruck des armenischen Textes nicht angängig war nachdem Plane und der Anlage des fraglichen Werkes.

Da nun aber die ganze Abhandlung meines Erachtens im ethnologisch-linguistischer Hinsicht von *ausserordentlicher Wichtigkeit* ist, so

wäre zu wünschen, dass die ganze Abhandlung im Armenischen Originaltexte publiziert wurde (eventuell auch mit Übersetzung in eine moderne europäische Sprache, und möchte ich Ihnen, mein verehrter Freund, dieses schöne dankenswerte Werk angelegentlich zur Ausführung anempfehlen... — Ihr ergebener Dr. Jos. Karst.

Ազգագրական և պատմական նութիւրով պարագոյ գիտնոց մեր այս գրուածը եւրոպական լեզուով երբ ծանօթացնելու առիթ ունենանք, պիտի ջանանք ի ըստ ընծայել, զունաւոր լուսատուութեամբ, նաեւ Մոգոց երկրպագութեան մի քանի պատկերներ եւս մեր ընտրելագոյն Աւետարանաց մէջէն, յուսալով այնու ո՛չ միայն նոր նմոյշներ տալ հայկական գեղարուեստին, այլ և նպաստել Հուզոյ Աէհրէրի դեռ նոր հրատարակած չքնադ գործին, որուն բովանդակութիւնը ծանօթացուցած ենք արդէն մերազնեաց « Բագմավէպի » յիշեալ թիւին մէջ հրատարակած մեր նախընթաց գրախօսականով:

քանչիւրին կրկնակի երեւցած դարմանալի տեսիլները¹, որոնք չորս յիշատակարաններուն մէջ եւս կը նոյնանան հանդերձ փոքր ինչ տարբերութիւններով:

Այս յիշատակարաններէս առաջինի մէջ (որուն խորագիրն է՝ «Վասն աւետաւոր հրեշտակին և քարոզելոյ գլղութեն Ս. Կուսին Մարիամու Աստուածածնին») ուշադրութեան արժանի է հետեւեալ պարագայն, այսինքն՝ Աւետման հետ կապելը Մոզուց գալուստը, այսպէս... «Զի յորժամ հրեշտակն աւետեաց Մարիամու ի Նիսան ամսոյ էր հնգետասան, որ է յԱպրիլի վեց, յաւուր չորեքշաբաթու և իններորդ ժամու աւուրն. և նոյնժամայն հրեշտակն ընթացաւ և զնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մոզուցն թագաւորաց՝ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն. և նոցա առաջնորդեալ աստեղըն՝ զօրացն ամենեցուն՝ զամիսս ինն: Ապա եկեալ հասեալ ժամանակ ծնընդեան սրբոյ Կուսին. քանզի յայնժամ թագաւորն Պարսից զօրաւոր էր քան զամենայն թագաւորսն Պարսկաց, որ էին յաշխարհին յարեւելիցս: Սոքա՝ որք էին թագաւորք Մոզուցն, եղբարք երեք. առաջինն Մեղքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. երկրորդն՝ Գասպար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. երրորդն Պաղղասար, որ ունէր զիշխանութիւն երկրին Արաբացոց. նոքա միարանեալ հասին ի ծնունդ Կուսին, փութացեալ հասեալ ժամանեցին», և այլն, և այլն:

Երկրորդ յիշատակարանին մէջ զիտոզութեան արժանի է նախ Յիսուսի Քրիստոսի ծննդեան ժամանակակէտն՝ որ կը զրուի «ի թագաւորութեան Հռովմայե-

ցոց՝ Աւգոստոս կայսեր քառասուն և երեք, և Արգարու Հայոց և Ասորոց՝ քսան և մի, և Հերովդէսի Հրէից արքայի՝ երեսուն և ութ տարին»: Բ. Յետ ըսելու թէ «Եւ ահա մոզք յարեւելից ելեալ եկին», և այլն, անդէն կը յարէ ասոնց ինչ ազգէ և յաշխարհէ ըլլալը, ըսելով. «Ոմանք ասեն՝ թէ յորդոցն Աբրահամու էին ի Գետուրական ցեղէն. և այլք՝ թէ թագաւորքն Արաբայ և Սարայ, ըստ վկայելոյն Գաւթեայ: Այլ երեք էին»... Գ. Բաց ի Մեղքոն, Գասպար, Բաղղասարէն՝ կը յիշուին յանուանէ նաեւ ասոնց տասուերկու զօրագլուխներն կամ հազարապետներն, այսպէս. «Եւ զլուխ զօրաց նոցա կարգեալ իւրաքանչիւր հազարաց՝ հազարապետս, արս երկոտասան, որոց անուանքն են այսորիկ. Բարխուրիդայ, Գադմուշայ, Բարդիմշայ, Շահարանայ, Խորինայ, Իդմիշայ, Իիշբուդայ, Խամառայ, Շաուրշայ, Աքշիրայ, Շահուրայ, Շամիրամ»:

*
**

Երրորդ յիշատակարանին մէջ նշանաւոր է հետեւեալ պարագայն, այսինքն՝ յետ ըսելոյ՝ — հանգոյն նախընթաց յիշատակարաններուն — թէ «Էին թագաւորք երեք», անդէն յոգնակի զիմօք կը թուարկէ անոնցմէ իւրաքանչիւրը, իբր զլուխ և ընկեր ուրիշ թագաւորներու, այսպէս. «Առաջինն՝ Մոզուց թագաւորքն Պարսից, որում անուն էր Մեղքոն. երկրորդն՝ թագաւորքն Հնդկաց, որում անունն էր Գասպար. երրորդ՝ թագաւորքն Արաբացոց, որում անունն էր Բաղղասար»,

1. Այսինքն՝ առաջին երկրպագութեան ժամանակ Հնդկաց թագաւոր՝ Գասպար՝ կը տեսնէ զՅիսուս «մարմնով որդի Աստուծոյ՝ բազմեալ յաթու փառաց, և զօրք անմարմինք սպասաւորէին նմա»: Արաբացոց թագաւորը Բաղղասար կ'ըսէ. «Ես մարմնով տեսի զնա՝ նստեալ ի վերայ գահոյից և զօրք բազմութեան առաջի նորս, որք անկեալ երկիր պազանէին նմա»: Իսկ Պարսից թագաւորը Մեղքոն հարցեալ՝ կը պատասխանէ. «Ես մարմնով տեսի զնա ի շարչարանս մեռեալ, զարձեալ

յարուցեալ կենդանացեալ»: Երկրորդ օրը երկրպագութեան զացած պահուն ի միասին, Գասպար փոխանակ իր առաջին տեսիան՝ Բաղղասարայ նախընթացարդունցած տեսիլը կը տեսնէ. այսպէս ալ Բաղղասար Մեղքոնին երեւցած տեսիլը կը տեսնէ, և Մեղքոն ալ Բաղղասարին առաջին տեսիլը: Յոյժ նշանակալից է այս զրոյցս, զոր իրարու պատմելով կ'իմանան երկ թագաւորները և կը հաստատուին մեծ խորհուրդին մէջ

և այլն
ներն հ
« առ
դիմիշ
րորդն
րինա,
Դիշպո
րորդ՝
մետա
ներորդ
նաեւ
երեք
դրկու
« Մեք
որ բու
աստեղ
Չոր
հազար
տրագը
նման
Հերով
« Եւ
կամ
ստուգ
զուր
գերու
զրաւ
ունիմ
ծննդե
և բազ
հարքն
իւրեան
առ մե
Աստու
զոր Տ
Այս յ
րիշ ն
նախոր
զտնու
զոր վ
« Յոր
զէս)
րոնով
պարս
և չոր
ամեն

ն և երեք, ան և մի, բնուն և թէ « Եւ կին », և չ ազգէ և ննք ասեն՝ Գեատու սգաւորքն ոյն Գաւ . Բաց ի նն՝ կը յի սուերկու պններն , ցայ կար հազարա սնուանքն սգամուշայ , ալ, Դոմի սուերշայ , » :

և այլն : Իսկ հազարապետներու անուն ներն հետեւեալ ձեւերով կը յիշատակուին . « առաջին՝ Բարնուրիդայ , երկրորդն՝ Գաղիմիշայ , երրորդն՝ Բարդիմիշայ , չորրորդն՝ Շահայպանայ , հինգերորդն՝ Խորինա , վեցերորդն՝ Գրդմիշայ , եօթներորդ՝ Դիշպուդայ , ութերորդ՝ Խումարայ , իննեւորդ՝ Շարուրայ , տասներորդ՝ Իսպանայ , մետասներորդ՝ Շահուրայ , երկտասաներորդ՝ Շամիրամ » : Բ . Նշանակելի է նաեւ այն պատասխանը՝ զոր կու տան երեք թագաւորները Հերովդէսի կողմէն զրկուած պատգամաւորներուն , ըսելով . « Մեք ի Պարսից եկեալ եմք՝ յարեւելից , որ բուն ազգաւ Մոգք կոչմք . եկաք աստ աստեղքն առաջնորդութեամբ » և այլն :

Չորրորդ յիշատակարանին մէջ ինչպէս հազարապետաց անուանքն՝ այսպէս և նօտրագրուած բացատրութիւնները յար և նման են երրորդին մէջ եղածներուն . բայց Հերովդէսէն ուղղեալ այս հարցման , թէ « Եւ յորմէ՞ լուեալ զայդ՝ որ ասէք . և կամ ո՞վ պատմեաց ձեզ զայդ . . . Յորմէ՞ ստուգիւ ունիք զվկայութիւնն զայն զոր դուք միայն գիտէք և ոչ այլ ոք » , Մոգերու տուած սոյն պատասխանը ուշագրաւ է . « Մեք ի նախնեաց անտի մերոց ունիմք զվկայութիւնս՝ (այսինքն վասն ծննդեան Փրկչին) զրով կնքեալ և պահեալ . և բազում ժամանակս սպասեալ մնային հարքն մեր յազգէ յազգ և յորդոց յորդիս իրեանց , մինչեւ եկեալ ասացեալ բանն առ մեզ կատարեցաւ . և ապա հրամանաւն Աստուծոյ յայտնեալ՝ եկաք ի տեղիսայս , զոր Տէր եցոյց մեզ » , և այլն , և այլն : Այս յիշատակարանիս մէջ կան երկու ուրիշ նշանաւոր մանրամասներ եւ՝ որոնք նախորդներուն մէջ կը պակսին , բայց կը գտնուին նոյնպէս թիւ 986 զբնագրին մէջ , զոր վերը նշանակեցինք . այսինքն են . Ա . « Յորժամ հրամայեաց արքայն (Հերովդէս) ձեռս արկանել ի նոսա (ի Մոգսն) բռնութեամբ , յանկարծակի շարժեցաւ ապարանք տանն՝ յորում նստեալ կային , և չորից կողմանց սիւնքն խախտեալ , և ամենայն շինուածք ապարանիցն անկեալ

կործանեցան , և բազմութիւն ժողովոյն՝ որ արտաքոյ անդր էին , փախեան ի տեղւոյէ անտի , և որ ի ներքոյ շինուածոյն էին , անկեալ սատակեցան , և մեռան յաւուրն յայնմիկ ոգիք եօթանասուն և երկուք՝ ընդ մեծամեծս և փոքունս : Եւ զայն տեսեալ քաղաքացիքն և ամենայն բազմութիւն մարդկան , անկեալ առ ոտս Հերովդէի , աղաչէին և առէին . Արձակեալ գնոսա (զՄոգսն) խաղաղութեամբ , զի երթիցեն զճանապարհս իրեանց » , և այլն : Բ . Մոգերուն՝ զօրքով Բեդդեհէմ հասած ժամանակ փողերն հնչեցնելը և Յովսեփայ և Մարիամու վախնալով այրէն դուրս փախչիլն և զՅիսուս մանուկը միայն թողուլը , և ապա խրախուսուած իշխաններէն այրը վերադառնալն և զանի գրկելով Մոգերուն ներկայացնելը : Արդ՝ իրարմէ ունեցած այս և դեռ ուրիշ մանրամասնութեամբք և տարբերութիւններով հանդերձ , — դարձեալ կը կրկնեմ , — որ այդ չորս յիշատակարաններն եւս իսկապէս մէկ աղբիւրէ յառաջ եկած են , ի հարկէ յաւելումներ և յապաւումներ կրելով հետագայ խմբագրողաց կամ ընդօրինակողաց ձեռքով :

Այդ աղբիւրը սակայն՝ գէթ Մելքոն , Գասպար և Բաղդասար անուանց նկատմամբ՝ ո՛չ գուտ հայկական ծագումն կրնայ ունենալ , և ո՛չ երեքտասներորդ դարէն առաջ Հայոց ծանօթ եղած է ըստ իս : Եւ ահաւասիկ առ այս իմ փաստերը : Նախ և յառաջ երեք Մոգերու անուանքը՝ Մելքոն , Գասպար և Բաղդասար , ո՛չ միայն հեթանոս , այլ և՛ քրիստոնեայ Հայոց քով բնաւ ի գործածութեան եղած չեն մինչեւ յիշեալ դարը , մանաւանդ թէ ժ.Չ . դարում հազիւ կը յիշուին այդ անունները կրող հայեր , և այն իսկ յոյժ ցանցառ կերպով . մինչդեռ եթէ ծագումով հայկական եղած ըլլային՝ շատ գործածական եւս պիտ'ըլլային անշուշտ : Բ . Ներսէս Կլայեցի ժ.Բ . դարում Մատթէոս Աւետարանի Մեկնութիւնը գրած և Բ . գլխու 1 տունը մեկնած ժամանակ՝ բնաւ չյիշատակեր յանուանէ երեք թագաւորները , այլ Աւետարանի բնա-

երկրպագու . որ փոխանակ նրնթացարար Բաղդասար Մելքոն ալ շանակալից և հմանան երեկ հուրդին մէջ

զիրը մէջ բերելէն ետքը՝ այս հարց ու պատասխանին կու տայ միայն. « Բազում քննութեան պէտք են մեզ՝ թէ ուստի՞ մոզքն էին, և յորմէ՞ աշխարհէ, և ո՞ յորդորեաց անձ զնոսա, և յինչ պատճառաւ: Ազգաւ ի Պարսից էին և աշխարհաւ՝ յարեւելից, որպէս աւետարանիչս ցուցանէ. բայց շարժման նոցա պատճառ՝ ո՛չ յինքեանց յատուկ, և ո՛չ յԱստուծոյ առանձինն, այլ ինքեանք յօժարեցան՝ և Աստուած յորդորեաց... Բայց պատճառ հաւաստի երեւելոյ նոցա այս է աստեղն՝ զի շարժեցին յերկրպագութիւն, առ ի լրումն մարգարէութեան, եթէ առաջի նորա նախ Հնդկիք անկցին: Եւ դարձեալ՝ զի սպառեալ էին յայնժամ մարգարէքն Խարայէլի, փոխանակ մարգարէիցն երեւեցաւ աստղն ի յանդիմանութիւն նոցա. զի զայն ինչ որ ի մարգարէիցն ոչ կամէին ուսանել, ի պարսկական բարբառոյն լուիցեն. և զի նորօր բացցէ դուռն հեթանոսաց: Եւ քանզի վասն այսր ամենայնի հարկ էր գալ նոցա՝ և այլ իւրիք չէր հնար, ո՛չ մարգարէիւ և ո՛չ հրեշտակաւ, այնր աղագաւ իւրեանց ընդելական արուեստին կոչեաց... Քանզի աստեղագիտութիւն ի նոցանէ յայտնեցաւ՝ վասն պարզ գոլոյ օդոյն ի խոնաութենէ ամպոց. զոր և նովին արուեստին հաւանեցոյց: Նաև զմարգարէութիւն Բաղամայ ունէին՝ որ ասացն. Ծագեացէ աստղն Յակորայ, և երեւեցի այր յԽարայէլի », և այլն: Ուրեմն այս խօսքերէս յայտնի կը տեսնուի որ մեր Շնորհալի Հայրապետին կամ զեռ ծանօթ չէր Մեղրոն, Գասպար և Բաղդասար՝ երեք թագաւորներ հնարող աղբիւրը, և կա՛մ իբրեւ առասպելական մի բան՝ չէ ուզած անոր՝ կարեւորութիւն տալ: Սակայն « ի պարսկական բարբառոյն » և անոր յաջորդող բացատրութիւններէն՝ զորս նօտրագրեցինը՝ կը տեսնուի, թէ իրեն ծանօթ ըլլալու էր ազգային կամ

պարսկական ուրիշ աւելի հին՝ զրոյց մը, որուն վրայ վերջէն պիտի խօսիմ:

Վարդան պատմիչն հաւանօրէն առաջին անգամ ներմուծած է Մեղրոն, Գասպար և Բաղդասար երեք թագաւորաց զրոյցը Հայոց մէջ: Եւ ստուգել՝ սա իր Պատմութեան մէջ (տես տպ. Վեհեակոյ, էջ 33) կու տայ մեզ հետեւեալը. « Եւ Օգոստոս՝ երկրորդ ինքնակալ՝ զկնի Յուլիոսի, զոր փորահան ասեն, որ և կայսր կոչեցաւ, և թագաւորեաց զկնի չորս հարիւր վաթսուն և երկու ամի խափանելոյ արքայութեանն Հռովմայ. և Օգոստոս եւս մեծացաւ ի ծնանել մեծին Աստուծոյ և ամենակալ արքային, յորում աւուրս եկին մոզքն՝ երկոտասան հազար հեծելովք, և լուեալ եթէ սով է ի Պարստին, թողին զգօրսն առ Արգար, և ինքեանք որ մեծքն էին գնացին երկոտասան իշխանօք և հազար հեծելօք. Մեղրոն՝ Պարսիկ, Գասպար՝ Հնդկիկ, Բաղդասար՝ Արար, ոսկի, կնդրուկ, զմուռ ընդ ինքեանս ունելով: Զայս զրեաց Լուկիանոս ոմն՝ Փռանկ (Հռովմայեցի), որ կայր յԱսորիս, առ կայսրն Օգոստոս. Գիտացէ ինքնակալութիւնդ քո, զի եկին ի հարաւոյ արեւելից արք մեծաշուքք և երկրպագեցին տղայոյ միոյ ծնելոյ ի Պարստին, հրաման առեալ ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա: Իսկ ի գնալ մոզուցն ընդ այլ ճանապարհս յաշխարհն իւրեանց, կոտորեաց Հերովդէս հազար չորեքհարիւր վաթսուն և երկու մանկունս՝ յերթալն Տեառն յեգիպտոս »:

*
**

Երեքտասաներորդ դարու մի ուրիշ գրիչ, այն է Խաչատուր Կեչառեցի, Վարդանայ աւանդածը կը լրացնէ զեռ աւելի ուշագրաւ պարագաներով: Սա իր մէկ գրութեանը մէջ — որ կը գտնուի Վիեննայի թանգարանի արխիւում — կը գրէ. « Գիտեմ եւ զի երեք բագաւորք են, Պարսից և Բաղդասար և Արարացոց. և տեսնեմ նոցա Գասպար, Պարսպար, և Մեղրի »:

1. Այս կէտիս նպատակը կ'երևի Գր. Տաթևացոյ աշակերտը՝ Մատթէոս վարդապետ, զի սա Ժ.Վ. դարում գրած Մեկն. Մատթ. Աւետ. գործին մէջ զրեթէ բառացի կերպով կրկնելով Ն. Ալայեցոյ յիշեալ տեղին —

ինչպէս այս ալ Ոսկերիանինը — կը գրէ. « Գիտեմ եւ զի երեք բագաւորք են, Պարսից և Բաղդասար և Արարացոց. և տեսնեմ նոցա Գասպար, Պարսպար, և Մեղրի »:

նակ
քած
խոս
վեա
Աստ
րիւն
և զ
մոզ
պէս
Բա
նու
թե
այլ
մե
զեկ
և տ
առ
կար
յար
գա
տա
հմ
թե
ման
նոր
աս
կ
գու
մու
ենի
ծան
Վա
ներ
են,
զիւ
կու
զր
կա
պի
կ
որ
Յա
րու

նական Հարց թիւ 39 Ոսկեփորիկ—Հաւա-
քածոյի՝ մէջ — սոյն խորագրի ներքեւ,
Խաչատուր վարդապետի կեչառեցոյ ժողովեալ ի ստոյգ օրինակէ վասն գարտեան Աստուծոյ առ մարդիկ, կուսածիւն բազաւ-
րիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ զմասնակն և գրագաւոր(ս)ն համառատ, կու տայ մեզ մոզուց գալստեան նկարագրութիւնը՝ այսպէս. « Մեւրոն Պարսից, Գասպար Հնդիկ, Բաղդասար արար, զոր և այլք այլ ա-
նուանք ասեն. սոյնպէս Մատթիլատայ, Թեշբայ, Սաղահոտաթայ », և այլն: Ապա այլեւայլ գրոյցներ մոզուց նկատմամբ պատ-
մելով, կ'ըսուի (Թիւ. 179 բ). « Եւ զայս զեկոյց Սեկունդոս (Secundus) իմաստունն և տեսնող, և Լուկանոս զրեաց յԱսորոց առ կայսրն Օգոստոս. Գիտասցէ ինքնա-
կալութիւնդ ձեր, տէր իմ արքայ, զի եկին յարեւելից՝ ի հարաւային կողմանէ՝ թագաւորք երեք՝ չքնաղ և զարմանալի պատարագօք, իմաստունք և հանճարեղք, հմուտ աստեղարաշխական վերլուծութեանց, և երկրպագեցին ի ծերպս վիմաց մանկան միոյ ծնելոյ ի Պաղեստին՝ առաջնորդութեամբ խոնարհագոյն լուսափայլ աստղի », և այլն, և այլն:

Ո՛չ Սեկունդոս իմաստասիրին տրուած գուշակութիւնն և ո՛չ ալ Լուկիանոսի (Սամոսատացոյն?) առ Օգոստոս կայսրն գրած ենթադրական նամակը կը գտնուին մեզի ծանօթ անոնց գրուածոց մէջ. հետեւարար՝ վարդանայ և Խ. Կեչառեցոյ աւանդածները կամ այլընդայլոյ բաներ համարելի են, և կամ բոլորովին շինծու: Եւ ստուգիւ՝ եթէ այդ հեղինակներն, այսինքն Սեկունդոս և Լուկիանոս, այդպիսի բան մ'ալ գրած ըլլան, կամ Մարկոս Աւրելիանոս կայսեր և կամ Անտոնինոսի ուղղած պիտ'ըլլային, որոնց ժամանակակից եղած կ'աւանդուին, և ոչ թէ Օգոստոս կայսեր՝ որ դար մը յառաջ կ'ապրէր իրենցմէ: Բնանուն Լուկիանոսի՝ վարդանէն մէջ բերուած տեղոյն մէջ պարզապէս « արք

մեծաշուք » կ'անուանուին Յիսուսին երկրպագութեան եկող մոզերը, մինչդեռ կեչառեցիէն մէջ բերուածին մէջ ընդհակառակն՝ « թագաւորք երեք » ի փոխուած են: Խ. Կեչառեցին գէթ ասով բաղաւոր է մեզ համար՝ որ իր սովորական աղբեր Մեւրոն, Գասպար, Բաղդասարէն դուրս՝ կու տայ մեզ Մատարիխատայ, Թեշբայ և Սաղահոտարայ անունները, որ ուրիշ աղբեր մը ցոյց կու տան մեզ լուկեայն: Արդ՝ այս վերջին անուանքս իսկ եթէ առաջիններուն պէս մոզերուն յատկացուած են, այնուհետեւ կրնանք հետեւեցնել՝ թէ ո՛չ ասոնք և ո՛չ ալ անոնք են պատմական. վասն զի պատմական յատուկ անուանք ինչ լեզուի ալ թարգմանուին՝ չեն կրնար այսպիսի այլակերպութիւններ կրել, զի այս հասարակ անուանց միայն կը պատահի: Ուստի այս կէտը ի նկատի առած մէկ կողմէն, և միւս կողմէն ալ դիտելով որ Մատթէոսեան Աւետարանի մէջ մոզք միայն յիշուած են առանց թագաւոր տիտոսի և որոշեալ թուի, հաւանական է կարծել՝ որ երեք թիւը՝ անոնց ըրած զըլխաւոր երեք ընծայից — որոնք են « ոսկի, կնդրուկ, զմուռ » — թուին վրայ յետոյ ուրեմն հնարուած ըլլայ. այսպէս նաեւ թագաւոր տիտոսն ալ անոնց արքայակերպ՝ Հերովդէսին ներկայանալուն և առ Յիսուս իրենց գանձերը բացած ըլլալուն վրայ յերկրեալ: Երոյն իսկ Մեւրոն, Բաղդասար և Գասպար անուններուն մէջ կարելի է գտնել լեզուականօրէն այդ երեք բառերու նշանակութիւնը, դիտելով որ ինչպէս ոսկին՝ այսպէս և Մեւրի = Մաւէք = Մեւրի՝ թագաւորի նշանակ են. կնդրուկ և Բաաղ = Բէլ (ուսկից կազմուած է քաղղեարէն Բաղդասար աւունք) աստուածական պատուոյ նշանակ է. և զմուռ՝ համաձայն արիական Gas (և gasati) արմատական (ուստի Գասպար) մեծութեան նշանակ է: Այսպէս նաեւ երկոտասան հազարապետաց անուանքն — ինչպէս և զօրաց վերաբերեալ գրոյցը՝ շինուած է Քրիստոսի երկոտասան Առաքելոց թուոյն վրայ, որոնք յետ յարութեան

1. Տես Հ. Յ. Տ. Յուլիոսի. յէջ 169-170:

« Գիտելի է
ացոց և Արտ
պրասար, է

նորա քարոզիցին երկոտասան ցեղից իս-
րայէլի և հեթանոսաց, և կոչեցին յերկըր-
պագութիւն մարդացելոյն Աստուծոյ: Եւ
որովհետեւ այսպիսի զրոյցներ բոլորովին
օտար են առաջին դարերու Ս. Հարց և
վարդապետաց, ուրեմն պէտք է որ միջնա-
դարեան մեկնիչներէն հնարուած ըլլան՝
թիւրիմացութեամբ Սաղմոսին ՀԱ. 10 և
Եսայ. Կ. 6 վկայութեանց, որոնք ուրիշ
բան կը նշանակեն: Արդ՝ եթէ այս այսպէս
է, այնուհետեւ կրնանք ըսել, որ երկու
բան միայն պէտք է ընդունել իբրեւ պատ-
մական և ամենաստոյգ՝ մինչեւ հիմայ մէջ
բերուած զրոյցներուն մէջ. այսինքն՝ թէ
Մոգեր (անորոշ թուով) եկան յերկրպա-
գութիւն նորածին մանկան Յիսուսի, և թէ
երկիրն՝ ուսկից եկան՝ Պաղեստինու արեւե-
լեան կողմը կ'իյնար իր աշխարհագրական
զրիւք. այս կէտերս ըստ ամենայնի հա-
մաձայն են Մատթէոսեան Աւետարանին,
ընաւ տարակոյս չի վերցնել:

Իսկ մոզ բառին նշանակութեան՝ և ա-
րեւելեան այդ երկրին վրայ եղած հայկա-
կան հին և նոր մատենագրաց ուրիշ կար-
ծիրները մէջ բերելէն կամ մեր կողմէն
որ և է մեկնութիւն տալէն յառաջ՝ կ'ու-
զեմք ծանօթացնել հայ դպրութեան մէջ
պահուած ամենահետաքրքրական յիշա-
տակարան մ'ալ, որ նախընթացներուն
հետ ունեցած ինչ ինչ աղբրսներով հան-
դերձ՝ կու տայ մեզ նոր աղբիւր մը. և
այս այնպիսի զրոյցներով՝ որոնք ոչ միայն
մեծապէս կը տարբերին վերը յիշուած յի-
շատակարաններէն իրենց մանրամասնու-
թիւններով, այլ և աւելի պատմական և
տոհմական իսկ ըլլալու երեւոյթն ունին

ծագումով: Եւ այս յիշատակարանս, որուն
խորագիրն է. Նորին իգալ մոզուցն յերկրպա-
գութիւն Տեառն, Աւետ. Մատրեոսի, կը
կազմէ Եպիփան Կիպրացոյ անուանը տակ
կեղծուած ընդարձակ և իր տեսակին մէջ
եզական գրութեան՝ մը ԺԹ. ճառը, որուն
բուն իմբագրողը սակայն առանց երկբա-
յութեան հայագրի մէկն ըլլալու է: Գրուածս
դեռ տպագրութեամբ ծանօթացած չըլլա-
լուն պատճառաւ՝ քաղելով կը դնեմ հոս
անկէց մեր խնդրոյն, այն է՝ մոգերուն ուղ-
ղակի վերաբերեալ մասը կամ զրոյցները,
որոնք Պարթեաց և Հայոց ծագման նկատ-
մամբ եւս շատ մեծ նշանակութիւն ունին:

*
*
*

« Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ
Հրէաստանի, յաւուրս Հերովդի արքայի,
ահա՛ մոզք յարեւելից եկին և ասնն. Ո՛ր
է. . . : Նշանացի ցուցանելով զտեղին՝ յա-
ւուրս Հերովդի արքայի, նա՛ և քաջայայտ
ասէ զանուն թագաւորին, որ և ի նորա
յերեսունեւինն ամին, և ի քառասունեւից
(Բ. օր. երեսունեւից) ամին Օգոստեայ
կայսեր՝ մեծին Հռովմայ, և յառաջնուսն
ամին Արզարու՝ թագաւորին Հայոց մեծաց,
և ի քսան ամին Արշաւրեայ՝ Պարսից ար-
քային: . . . Եւ արդ իբրեւ ասաց (Մատ-
թէոս) ահա մոզք յարեւելից եկին և ասնն,
կարծեցին ոմանք ի վարդապետաց սրբոց՝
մերձ առ աստուածային ծնունդն լինել և
զգալ մոզուցն. բայց մեզ ոչ եղեւ գիտելի,
այլ իսկապէս՝ իբր տեսութեամբն վերին.
և իմացմամբ Հոգւոյն սրբոյ այսպէս դա-
տեցար՝ որպէս և էն իսկ. զի ի փրկագործ

1. Որ կը գտնուի մեր Մատենադարանի թիւ 1649
նօտարգիր Չեռագրին մէջ՝ և կը կրէ այս ընդհանուր
խորագիրը. Երանելոյն Եպիփանու արքեպիսկոպոսպե-
տին Կոստանդեայ կիպրացոյն. Ասացեալ ի սկզբնագիր
Արարածոց եւ յաւետարանական քարոզչութեանց որ ըստ
Ղուկայ, և այլն: Բ. օր. թիւ 669, 1. իմ անպատին
հնագոյն Չեռագրէ մը զաղափարուած է Հ. Ն. Սարգը-
սեանի ձեռքով: Գ. օր. թիւ 1711, աւելի կատարեալ,
նոր ստացայ: Հայկական թարգմանութիւնն է հին և

ընտիր, այլ հաւանօրէն Զ-Ի. դարու հայ վարդապետ
մը իմբագրուած է նոր յաւելուածովը. վասն զի ԻԱ.
զԽում կը խօսուի Մահմետի վրայ առանց անուանի:
Գրուածիս հին և հետեւաբար Եպիփան Կիպրացոյ ըլ-
լալն մասամբ հաւանական է. քանի որ նա հրէի ծնունդ
եղած կ'աւանդուի, զարմանք չէ որ իր ազգի Բարու-
նիներէն կարենար հաւաքել նաեւ այսպիսի զբաւոր կամ
անգիր աւանդութիւններ:

և ի
շեր
ծնե
ի ս
աս
որպ
բե
յա
հա
տե
զի
ցող
մայ
իմ
յՕ
ըն
զա
հե
ամ
նա
ամ
յու
առ
Հօ
Փր
ժա
աշ
զե
ւա
պ
զա
ար
պ
ի ն
հա
բու
նայ
քա
թե
բն
յե
էր
զա
քե
բի
յՈ

որուն
կրպա
ի, կը
ը տակ
ին մէջ
որուն
րկրա
ուածս
ըլլաւ
մ հոս
ն ուղ
ցները,
նկատ
ունին:

դեհէմ
բայի,
Մեր
ն՝ յա
այայտ
նորա
եւելից
ստեայ
Նուսն
Քծաց,
նց ար
Մատ
ասեն,
արբոց՝
ենել և
տեղի,
վերին.
ս դա
ագործ

դապեւ
զի ԻԱ.
անուան
ուցոյ ըւ
ծնունդ
Բարու
ւոր կամ

և ի լուսապայծառ յայնմ փառաւոր զի
շերին, և ի ժամն երբորդ նմին զիշերոյ
ծնեալ եղեւ Բանն Աստուած, մարմնացեալ
ի սրբոյ կուսէն, և ի նմին ժամու և նորա
աստղն՝ լուսապայծառ և ջահաւորեալ,
որպէս զօրութիւն Աստուծոյ՝ երեւեցաւ յա
րեւելս՝ ըստ բարձրանալոյ արեգականն
յաստիճանն՝ վերին կողմն հիւսիսոյ. ո՛չ ի
հաստատութեանն երկնից որպէս զայլ աս
տեղս, զի ոչ ի նոցանէ, այլ ի խոնարհ,
զի տեսցի առհասարակ ամենեցուն ազդե
ցող և պայծառ տեսութիւն, այլ որոց հրա
մայեցաւ ի Տեառնէ... Այլ և օ՛ն անդր
իմանալի եւս է, քանզի և ել հրաման
յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել
ընդ ամենայն տիեզերս. բայց և իսկապէս
զարժանն զիտել պարտ է առ ստուգութեան
հետս ընթանալով, զի ի տասն Նիսան
ամսոյ՝ ըստ հերբայեցեացն և ըստ լուս
նական համարոյ, այլ և ի վեցն յԱպրիլ
ամսոյ՝ ըստ տումարական արհեստի և ըստ
յունական իմաստութեան: Ուստի և ի նմին
աւուր փրկութեան ել հրաման յԱստուծոյ
Հօրէ, և առաքեաց զմիաձին Բանն իւր՝
Փրկիչ աշխարհի. և ի նմին իսկ փրկաւէտ
ժամուն ել հրաման յՕգոստոս կայսերէ՝
աշխարհագրաւն ազատել զամենայն տիե
զերս: Ուստի և ի վերին հրամանէն հա
ւատացաք զայն եւս լինել. այլ և նախա
պատիւ առնելով Օգոստեայ կայսեր՝ զթա
գաւորսն յարեւելից, և առաքէ առ նոսա
արս պատուաւորս հրովարտակօր մեծագին
պատարագօր. և իրբեւ աղերսելով խնդրէ
ի նոցանէ՝ բանիւ և զրով առնել զաշխար
հագիրն ըստ օրինին՝ որպէս և ինքն յիւ
րում աշխարհին, դարձուցանելով զամե
նայն փախուցեալսն և զվտարանդիսն աղ
քատացեալսն և զտնանկսն, որ ի բնու
թենէ հարկացն փախուցեալսն ի հայրենի
բնակութենէ իւրեանց, և զպանդխտեալսն
յերկիր օտար:... Դարձեալ պատշաճ իսկ
էր լինել՝ որպէս և եղեւն իսկ. ուստի և
զառաջինն, օ՛ն անդր, և յարեւելս առա
քելով կայսեր, մինչեւ ի ծովն մեծ կաս
բիական, և յարեւմուտս մերձ ի ծովն
յՈվկիանոս, և ի հիւսիս առ ահաւոր ծովն

Պոնտոսի, և ի հարաւ մօտ եւս ի մեծաս
քանչ ծովն Անդրիանուն կոչեցեալ: Այլ՝
որպէս և վերագոյն ասացաք՝ նախապա
տիւ առնելով զթագաւորսն արեւելեան.
զի նորա զալոց էին յերկրպագութիւն ան
դրանկանն Աստուծոյ Հօր և Տեառնորդոյն
կուսածին մանկանն Յիսուսի՝ համանգա
մայն արարածոց:
Եւ արդ ահա ժամ է մեզ, զի ի մեծի
տօնիս սուրբ և աշխարհակեցոյց ծննդեամբն
Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ զիտել և ճա
նաչել վասն մոգուցն, թէ ո՞րք, յորո՞ց և
յորմէ՞ ազգէ էին, և յորո՞ւմ ժամանակի
եղեւ զալ նոցա պատարագօր յերկրպա
գութիւն նորածին արքային...:
Եւ ահա յայտ իսկ է. այր մի Աբրահամ
անուն՝ յաշխարհէն Քաղդէացոց՝ որ և
շնորհօքն Աստուծոյ եղեւ նմա ճանաչել
զարարիչն Աստուած, որ է աւրհնեալ յա
ւիտեանս... Արդ՝ յետ մեռանելոյն Սա
ռայի կնոջն Աբրահամու՝ առեալ Աբրահամ
զՔեաուրա զաղախինն Սառայի ի կնու
թիւն, և ծնաւ ի նմանէ Աբրահամ որդիս
վեց, զԵմբան և զԵկսան, զՄադան և զՄո
դոն և զԵսրոկ և զՍովին, և սնուցանէր
զվեցեսին զորդիսն իւր, այլ և ուսուցանէր
զնոսա՝ պաշտել զարարիչն Աստուած, որ
արար զերկինս և զերկիր: Ուստի և ինքն
Աբրահամ՝ հաւատովն որ առ Աստուած՝
լցեալ եւս էր իմաստութեամբ. նա եւս
քաջապէս ուսեալ ի հարց իւրոց, այլ և
ի Քաղդէացոց զարուեստս աստղաբաշ
խութեան. վասն զի Բարեւալցիքն կիրթ
եւս լինին այնմ զործոյն... Նոյնպէս և
վարժեալ ուսոյց զորդիսն իւր զվեցեսեան,
և ետ նոցա նշան վասն զալստեան օծե
լոյն՝ կուսական ծննդեամբ՝ յաշխարհս, և
հրաշափառ նորայն աստեղն երեւելոյ: Այլ
և յամենայն ստացուածոց իւրոց, զոր ու
նէր, եղբայրարածին արարեալ զնոսա
խահակայ յեղբօրէն իւրեանց, և յիսկա
պէս յեղբօրդուոյն յՂամանուէլէ, և հրա
մայեաց նոցա՝ զնալ յաշխարհն արեւելեան.
և աւանդապահն բանիւ և զրով ասաց
նոցա պահել զոր ուսանն, այլ և ուսու
ցանել ամենայն զաւակաց իւրեանց և ,

ակն ունել փրկարար զաւակին Տեանն
իւրեանց Եւ յորժամ լինիցի, նորա
փութապէս եկեալ ընծայիւք յերկրպագու-
թիւն օծելոյն և ծնիցելոյն իսահակայ յեղ-
բօրէն իւրեանց, և յիսկապէս եղբօրորդոյն
յիմանուէլէն, ըստ այնմ որ ասէ. Եղբօրոր-
դին իմ յարեաց զձեռն իւր ի ծակոյն՝ բա-
նալ ինձ զգուռն կենաց մտին:

Եւ ողջունեալք ի հօրէն իւրեանց յԱ-
րրահամէ և յեղբօրէն իսահակայ, այլ և ի
մօրէն իւրեանց Քիտուրայ, և յամենեցունց
առեալ բաժին իւրեանց ի շարժուն իւրեանց
և յանշարժուն. և աւրհնեալ ի հօրէն և
յեղբօրէն իսահակայ՝ և արձակեալ յղեցին
զնոսա, յանձն արարեալ բարձրելոյն Աս-
տուծոյ: Եւ նորա յուղի անկեալ և եկեալ
անցին ընդ մեծ գետն Եփրատէս, և բնա-
կեցան ի Միջագետս Ասորոց յարեւելից
կուսէ, և եկեալ ի Խառան ի տուն հօրն
և հաւուն իւրեանց Թարայի: Եւ լուեալ
Նաբովը՝ եղբայրն Արրահամու, և իսկոյն
ե՛լ ուրախութեամբ ընդառաջ եղբօրորդոց
իւրեանց Եւ կարգաւորեաց զնոսա
Նաբովը հօրեղբայրն իւրեանց ի հողաբլերն
Միջագետոցն, և ի լերինս յարեւելից կուսէ
բնակելով խորանօք. . . . այլ և ի դաշտական
վայրս ըստ եղանակաց տարւոյն: Եւ հրա-
մայեաց եղբօրորդոյն իւրոյ Եմբանայ առ-
նուլ ի կին ի սեպհական ազգէն իւրեան:
Եւ ծնաւ Եմբան որդի, և անուանեաց
զանուն եղբօր իւրում Եկսան. և Եկսան
առ իւր կին և ծնաւ որդի և անուանեաց
զանուն նորա յանուն եղբօրն իւրոյ Մա-
դան, յորոց զարմից երեւեցաւ Արշակ քաջ
և Վաղարշակ եղբայր նորա, թագաւորք
Արշակունիք՝ Պարսից և Հայոց աշխար-
հին: Ուստի և սուրբն Գրիգոր Լուսաւորիչ
Հայոց մեծաց, որ գերագանցէ քան զա-
մենայն սուրբս, և ազգն կամսարակա-
նաց. . . .: Եւ Եկսան եղբայր Եմբանայ ա-

1. Յոյժ կարեւոր և ուսուցիչութեան անժամի կէս
մ' է այս Պարթեւ Արշակունեաց ծագման նկատմամբ,
որոնց մասին աջուճախ բաներ գրուեցան վերջերս:
Ժամանակաւ A. Carrière տեղեակ չըլլալով այս յի-
շատակարանիս գոյութեան, Մ. Խորենացոյ մտաց զիւս
համարեցաւ և խտօրէն ըննադատեց: Սակայն - ինչպէս

ռեալ կին՝ ծնաւ զՍարի և զԹեման և զԳա-
դան. և Գադան ծնաւ զՌագուէլ, և զՆաար-
դուէլ (Բ. օր. Նարդուէլ) և զԱսուրիմ և
զԼուտուսիմ և զԳոլոփոնիմ: Եւ Մադան ծնաւ
զԳեբար և զԱփեբ և զԵնովբ և զԱրիգա
(զԱրդիա) և զԵգակայ. ամենեքեան սորա
են որդիք Արրահամու, զոր ծնաւ ի Քե-
տուրայ:

Եւ ասէ Բաղամ ծագեցէ աստղն
Յակովբայ և յարիցէ այր յիսրայէլէ, և
հարցէ զիշխանն Մովարու. . . . Եւ զնաց
Բաղամ ի տեղի իւր, և շրջեալ ի Միջա-
գետս Ասորոց և ի Հայաստանեաց աշ-
խարհն և ի Պարսկաստան և յամենայն
տունն արեւելեան աւելի եւս քան զամս
երեսուն և զհինգ. և քարոզեալ ուսուցա-
նէր զոր ինչ եցոյց նմա Բարձրեալն՝ վասն
զալստեան կուսական ծննդեամբ սուրբ
միածնին իւրոյ յաշխարհ:

Օն անդր և իբրեւ լուան որդիքն Արրա-
համու (քետուրածինք) զքարոզեալն ի Բա-
ղամայ՝ իբրեւ ուսեալք եղեն յԱստուծոյ.
և ձայն աւետեաց տային միմեանց ուրա-
խութեամբ և ցնծութեամբ բազմաւ, և ա-
սէին առ միմեանս՝ մերձ լինել զաւակին
իսահակայ, զոր ուսուցին մեզ հարքն
մեր. . . . և առաւել եւս ինդային իբրեւ
լուան՝ թէ մեծացի թագաւորութիւն նորա
քան զԳոգայն: Եւ եկեալ ի վերին հրա-
մանէն ի միտս իւրեանց և ասեն այր ցընկեր
իւր. եկայք խաղասցուք և զնասցուք յաշ-
խարհն յայն հեռաւոր, և տեսցուք զթա-
գաւորութիւն Գոգայ, թէ ո՛րքան փառաւոր
և բարձրագոյն լինելոց է քան զնորայն:
Եւ հաճեալ եւս զմիմեանս՝ ելին ի Մի-
ջագետաց Ասորոց ըստ տեսչութեան Աս-
տուծոյ, և յուղի անկեալ՝ զնային բանակս
բանակս՝ օր ըստ օրէ և շաբաթ ի շաբաթէ
և ամիս յամսոյ: Եւ ուր անցանէին՝ սիրով
ընդունէին զնոսա բնակիչք երկրին, այլ և

եարքն պիտի տեսնենք - Ամանունն եւս (առ Սերիոսի)
նոյնը կ' աւանդէ, հայկական գրոյցէ մ' օգտուելով, նաեւ
Հայոց կամ Արմենական ծագման նկատմամբ: Տես և
Յաճախապատում, ճառ Ի:

2. Յովսէպոս եւս յԱ. գիրս Հնախօսութեան սոյնը
կ' աւանդէ զրիթէ բառացի կերպով:

նոր
զի
առ
զի է
հով
նեւ
փա
նոյ
զա
լին
և զ
կէ
յաշ
ցան
թագ
զնո
ցաւ
նոս
զայ
թագ
զա
և ի
ստ
կե
առ
քե
զօր
կամ
ընդ
թե
և զ
շա
քար
շակ
զա
թէ
այն
ի ս
ճամ
իր
զար
Ու
ընծ
շոր
նախ
ուր

նորա ճարպով գառանց և կաթամբ և կոզիւ առատածեռն լինելով ամենեցունց, եւս առաւել տնանկաց և աղքատաց . . . : Եւ զի էին նորա արք խաղաղութեան՝ անեալ հովուական արուեստիւք, բացօթեայք լինելով հանապազ նշմարէին զաստեղս, և փառաւոր առնէին զԱստուած զարարիչն նոցա : Եւ վասն այսորիկ ոչ ոք ի թագաւորաց և իշխանաց հեթանոսաց կամէին լինել նոցա հակառակ, այլ իբրեւ զհարս և զեղբարս մեծարէին զնոսա և յուղարկէին ուր և կամէին : Եւ իբրեւ հասին յաշխարհն Գոգայ և Մոգայ . և բանակեցան անդ երկոտասան դասս : Եւ եկեալ թագաւորն Գոգայ զօրօք բազմօք տեսանել զնոսա, և ի ծածուկ ի սրտին զարհուրեցաւ ի նոցանէ, և առ երեսս ինզպաց ընդ նոսա : Եւ առաքեաց առ թագաւորն Մոգայ արուեստաւորս և ասէ . Մեծացաւ թագաւորութիւնս իմ քան զամենայն թագաւորաց, վասն զի արք խաղաղութեան և իմաստութեան (են), այլ և մեծամեծք ստացուածովք՝ որ ոչ գոյ թիւ : Արդ՝ եկեցես և տեսես զըրոսա միարան, և կամ առաքեցից զպատուաւորս ի դոցանէ առ քեզ : Եւ նա լուեալ՝ փութանակի եկն զօրօքն առ եղբայրն իւր Գոգ, զի համակամք էին միմեանց, և ունէին նուաճեալ ընդ ձեռամբ իւրեանց զՊարսիկս և զՊարթեւս և զԱսորեստանեայս և զԽուժաղուժան, և զԲարեղուն, զորս ի Գիրս կանոնաց յիշատակէ՝ զԱղղէ լինել հրամանատար, և քարոզ նոցին՝ առաքելոյն թաղէոսի զաշակերտն : Եւ ուրախացեալ երկուց թագաւորաց ընդ գալ նոցա յաշխարհ իւրեանց, թէպէտեւ ոչ ի սրտէ՝ զի երկնչէին : Եւ այնչափ մեծարեալ զնոսա առհասարակ ի պատիւ սիրոյ, նա և սեղանակիցս զմեծամեծս նոցա արարեալ զբազում աւուրս իբրեւ զարհուրեալք ի նոցանէ, մինչեւ զարմանալ զօրացն՝ որ ի դրան արքունի : Ուստի և նորա յամենայն ընչից իւրեանց, ընծայեցին թագաւորացն երկոցունց : Եւ շոքա հրամայեցին նոցա և ասեն . Ամենայն նախարհս մեր առաջի ձեր է շէնն և անշէնն՝ ուր և կամք ձեր են՝ բնակեալիք : Եւ նորա

ասեն . Մատայք ձեր եմք՝ տամբ և որդովք և անասնովք, միայն աչք ձեր քաղցրութեամբ հայեցին ի վերայ մեր, և բնակեցան ուր և հաճոյ թուեցաւ նոցա : Եւ օր աւուր զօրանային մեծացեալ յոյժ, և Տէր էր ընդ նոսա, որպէս ընդ Արրահամու հօրն իւրեանց : Ուստի և յազգէ թագաւորացն առին աղջկունս կանայս ուստերաց իւրեանց, և եղեն որպէս ազգ մի խառնեալ ընդ իրեարս : Եւ անցին բազում ժամանակս, կացուցին թագաւորքն Գոգայ և Մոգայ ի նոցանէ արս իմաստունս ի վերայ քաղաքաց և յաշխարհին իւրեանց ոստիկանս . և եղեն զօրաւորք և հանձարեղք և արիք ի պատերազմունս ազգաց՝ որ հակառակէին նոցա : Այլ և օն անդր ի մերձեանալ մերոյ փրկութեան, ի ծագել աստեղն Յակոբայ՝ շարժեցաւ պատերազմ ի վերին Հնդկաց և ի Խուժաստանաց, որ յայնկոյս մեծ և ահաւոր գետոյն Գեհոնի : Եւ թագաւորքն Գոգայ և Մոգայ՝ և որք ընդ ձեռամբ նոցա նուաճեալ եւս էին, ելին զնալ յաշխարհն Հնդկաց և ի Խուժաստան կարծէին եւս զնոսա հնազանդել : Եւ կացուցին ի վերայ ամենայն թագաւորութեանց իւրեանց ոստիկանս և աթոռապահս յորդուցն Արրահամու եկելոցն առ նոսա : Եւ ետուն զամենայն ամրոցս և զգանձս արքունականս և զքաղաքան և զղղեակնս երկու եղբարցն զԳոգ և զՄոգ ի ձեռս նոցա . և զրեցին մուրհակս, և կնքեցին դիւանական մատանեաւ, և ասացին ընդ բնակիչս աշխարհին, թէ լինիցի դառնալ մեր առ ձեզ, յաղթելով թշնամեաց մերոց, և ահա սոքա մտերիմ և հաւատարիմք մեր, և մեք տեարք սոցա և ձեզ : Եւ եթէ հասանէ մեզ մեռանել ի պատերազմի, սոցա մնացէ աթոռս թագաւորութեան մերոյ և որդուց սոցա . և ազգ որ մնան՝ ծառայեցեն ձեզ և որդուց դոցա յաւիտեան :

Եւ աւրհնեալ զնոսա և ողջունեալ հաստատեցին յիւրաքանչիւր տեղիս . և ուստի լինէր այս՝ եթէ ոչ ի հրամանէ Աստուծոյ Արրահամու, Իսահակայ և Յակոբայ՝ առ ճշմարտութեան յայտնումն : Եւ նորա ելին մեծաւ և ահաւոր շարժմամբ՝ անյաղթելի

Գոգայ
նախար
բիմ և
ն ճնաւ
Արիդա
սոքա
ի Քե

աստղն
էլէ, և
գնաց
Միջա
ց աշ
մենայն
զամս
սուցա
վասն
սուրբ

Արրա
ի Բա
ուծոյ
ուրա
և ա
ւակին
հարքն
իբրեւ
նորա
հրա
ցընկեր
ք յաշ
զթա
ուաւոր
որայն
ի Մի
ն Աս
անակս
սարթէ
սիրով
այլ և

Արիդայ
ով, նաեւ
: Տես և

ն սոյնը

զինքեանս գիտելով, այլ և յաղթել ամենեցուն կառօք և գազանօք և ասրանագետն զօրօք: Եւ անցեալ ընդ մեծ գեան Գեհնն, և մտեալ ի Խուժաստան և ի վերին Հնդիկս. և իբրեւ յանձանօթս լինելով՝ ոչ գիտելով զմուտ և զեւս գաւառին: Եւ պատեալ զօրացն ի հեռաստանէ արգելին զմուտ կերակրոց և զգինի. և զոր բարձեալ ունէին՝ նուազեցին, և սովալլուկ եղեալ պակասեցան ի զօրութենէ ինքեանք և երիվարք իւրեանց: Ուստի առ սակաւ սակաւ մաշեցին ի սուր սուսերի և սպանին և զթագաւորսն և զմեծամեծսն զօրաց նոցա:

Եւ ի նմին ամի Կիւրոս թագաւորն պարսիկ, զոր յանուանէ աստուածարանական մարգարէն Եսայի կոչէ, ասելով բանիւ Տեառն. Այսպէս ասէ Տէր՝ ցօծեալն իւր Կիւրոս, որ և մտացն հայելով նշանակէ զՔրիստոս: Սա եկեալ հարկանէ՝ մեծաւ պատերազմաւ զԳարեհ՝ որդի Արշաքի, և բառնայ զթագաւորութիւն Քաղդեացոց. և ինքն նստեալ յաթոռ թագաւորութեան Բաբելացոց՝ զամս եօթանասուն, և առեալ կին մի կոյս ի դստերաց Երրայեցոց: Եւ քանզի և ինքն Կիւրոս էր ծնեալ ի վեցեսեան որդւոցն Արրահամու, որ և յերրորդում ամի թագաւորութեան իւրոյ արձակեաց ի Բաբելոնէ զժողովուրդն Տեառն մեծաւ փառօք...: Ուստի և առաջնորդականին իմացմամբ այսպէս դատեցաք՝ զի ի գալստեան երկրորդում իսկապէս օծեալն Յիսուս Քրիստոս...: Այլ և որդիքն Արրահամու ի նմին ամի հաստատեցան յամենայն թագաւորութիւնս աշխարհին Գոգայ և Մոգայ և Պարսից և Մարաց և Ասորեստանեայց և ի Խուժաստանեաց: Առաքեցին ի Բաբելոն առ Կիւրոս արքայ Պարսից՝ լինել ընդ նոսա սիրով. և զի եղբայր և արեան մերձաւոր էր նոցա յԱստուծոյ...: Եւ ընկալեալ զհրովարտակն նոցա, և ընծայեալ զառաքեալսն մեծաւ պարգեւօք, և եղեւ կատարեալ սիրով ընդ երկոտասան թագաւորսն որք ի շատաւիղէն վեցեսեան որդւոցն Արրահամու. որ և տիրելով մեծի թագաւորութեանցն Գոգայ և Մոգայ, և Պարսից և

Մարաց, և Ասորեստանեայց և Մարայ, և տիրել մեծի թագաւորութեանցն ինքեանք և որդիք իւրեանց, և որդիք որդւոց մինչեւ ի տասնեւիշորս ազգս, և աւելի եւս քան զամս հինգհարիւր. և այնքան լցեալ եւս էին իմաստութեամբ և հանձարով կատարեալս, այլ և խոնարհք և առատածեռն իբրեւ զհայրն իւրեանց Արրահամ, մինչ զի հանձարեղս և մոգքս մակադրեալ կոչէին զնոսա բնակիչք աշխարհին այնորիկ:

Ուստի և քաջ եւս գիտէին զարուեստ աստղաբաշխութեան, քանզի և իմաստնացեալ էին ի նախնեաց իւրեանց և հմուտ ամենայն կարգի աստեղացն: Օն անդր, և եօթանասունեւերկու աստեղացն կարգաց, և երկոտասան կենդանակերպիցն, և եօթն Գօտեացն...: Այլ և ի բազմանալն և ի սերելն իւրեանց ի պարսկական և յարեւելեան աշխարհն և ի թագաւորութեանն Գոգայ և Մոգայ, ուսան և զըղձութիւնս և զհմայս, որպէս զՔաղդէայս. նմանապէս Մովսիսի և Յովսեփայ, այլ և տեսեամբ մարգարէութեան Գանիէլի՝ որ վասն Օծելոյն...: Վասն զի թագաւորքն Գոգայ և Մոգայ սիրով և իսաղաղութեամբ լինէին առ թագաւորսն Բաբելացոց, և առաւել եւս ընդ բոնական Նաբուգոդոնոսոր: Եւ որպէս առհաւատչեայ՝ սիրոյ ազգաւ առաքեցին յորդւոցն Արրահամու, որք եկեալ բնակէին ի Բաբելոն, և առնուանեաց զնոսա արքայն Պարթեւ: Ուստի և նոքա ուսան եւս ի Բաբելոն գիմաստս հոգեւորս ի մարգարէիցն յԵզեկիէլէ և ի Գանիէլէ և յԱնգէլէ և ի Զաքարիայէ, այլ և յորդւոց գերութեան, որ հանձարեղ և հմուտք էին գիտութեան բարձրելոյն... և եկեալ ուսուցին ամենայն ազգի իւրեանց, զօրինացն և զմարգարէիցն՝ աւանդապահ բանիւ լինելով, այլ և զրով մինչեւ ի գալ օծելոյն կուսական ծննդեամբ. և նոքա պատմէին իրերաց՝ ազգս ըստ ազգի՝ ընդ ժամանակս ժամանակս, ակն ունելով փրկութեան աշխարհի: . . .

Բայց և աստանօք ի հասանել հզօր և պատուաւոր արանցն առաքելոցն ի

յՕգր
ի կ
աւ
Մար
որ
բաթ
թու
ի յ
թիւ
բաղ
բաղ
Զահ
յազ
Եւ
զնոս
Հոգ
խար
օր
ցերե
տու
գաւ
զհր
կալ
և հր
և ս
բեր
չի:
մոս
աւրհ
յոր
էր հ
տայ
զամ
իր
ղակ
նոր
աստ
զար
բաղ
տուն
ի հ
կար
պէս
բարձ
մեն
հաս

յՊզոստոս կայսերէ ի մայրաքաղաքն Գոգայ՝
ի կատարման ինն ամսեայ, և հինգօրեայ
աւետեացն Գարրիէլի առ սրբունի կոյսն
Մարիամ. ուստի և ի փրկուէտ աւուրն՝
որ է չորեքշաբաթ, յորում և հինգշա-
բաթ լուսանայր, վասն զի և այնպէս
թուեն իմաստունքն և Երբայեցիքն: Արդ՝
ի յիններորդ ժամու աւուրն չորեքշաբա-
թին մտին իշխանքն հռովմայեցիքն ի
քաղաքն Գոգայ, և երթեալ պատմեցին
րազատրիկ Գոգայ, որոյ անուն կոչէր
Չահտուն, որ թարգմանի յուսատու. և էր
յազգէն Եմբանայ՝ որդւոյն Արրահամու:
Եւ փութանակի պատրաստեցաւ կոչել
զնոսա, մանաւանդ իրրե զիտաց եթէ
Հռովմայեցիք ևս են, և յարեւտեայ աշ-
խարհէն եկեալ զամիսս ինն, և զհինգ
օր ի ճանապարհի ելով անհանգիստ՝ ըզ-
ցերեկն ամենայն և զցայգն՝ ըստ հեշ-
տութեան ճանապարհին: Զարմացեալ թա-
գաւորն և հիացեալ յոյժ. և նորա հոտն
զհրովարտակն ի ձեռս նորա. և նա ըն-
կալաւ, այլ և քաղցրացաւ ի տես նոցա.
և հրամայեաց մեծաւ պատուով բազմել,
և սկսաւ խօսել ընդ նոսա լրջմտութեամբ՝
բերանով և լեզուաւ իսկապէս թարգման-
չի: Յինն ժամէ չորեքշաբաթով աւուրն,
մոռանալով զընթրիս երեկոյին, մինչև
աւրհնեալ պահու լուսապայծառ գիշերոյն՝
յորում և հինգշաբաթ լուսանայր...: Եւ
էր հրովարտակն ի ձեռս թագաւորին. և
տայ նա ի ձեռս ատենադպրին, որով և
զամենայն ազգաց զիրս զիտելով նա: Եւ
իրրե սկսաւ ընթեռնուլ՝ յանկարծ և յե-
ղակարծ ժամուն երբորդի գիշերոյն այ-
նորիկ ճառագայթեալ լոյսն գերազանց՝
աստղանման տեսլեամբ՝ առաւել ևս քան
զարեգակն թափանցիկ լուսով ի վերայ
քաղաքին և ապարանից արքային Զահ-
տունոյ թափանցիկ լինելով: Եւ ոչ էր նա
ի հաստատութեան երկնից, այլ և թուէր
կարի ևս խոնարհագոյնս. ուստի և այն-
պէս էր՝ զի թէ այնու ճառագայթիւք ի
բարձրութիւն երկնից երևեալ ևս էր, ա-
մենայն արարածք լի ևս լինէին լուսով
ճառագայթարձակ փայլմամբն. բայց նոցա

աշխարհին միայն երևեալ, ուր և խոր-
հրդովն Աստուծոյ սահմանեալ էր յառա-
ջագոյն: Եւ տեսեալ զայն թագաւորին՝
անկաւ ի վերայ երեսաց իւրոց՝ երկրպա-
գելով, և փառս վերառաքէր բարձրելոյն
Աստուծոյ... զի և ի նմին ժամու յեր-
րորդ պահու գիշերոյն (ծննդեան Քրիս-
տոսի) և նորայն աստղն երևեալ մեծաւ
պայծառ փառօք յաշխարհն Գոգայ և
Մոգայ, ըստ այնմ. Տեսաք զաստղ նորա
յարեւելս, և այլն:....

Եւ թագաւորն զգիշերն ամենայն պշու-
ցեալ ևս կայր ընդդէմ աստեղն. նմանա-
պէս և աշխարհն արեւելից որոց ազգէր
հրամանն՝ առ տեսութիւն ձերոց և տը-
ղայոց. ուստի և առ վաղիւն նոյնպէս
երևէր ճառագայթարձակ փայլմամբ ընդ
արեգակնային ճառագայթիցն, առաւել
քան զնորայն ունելով զեթնպատիկ զարայ-
ճառութիւն արփիահրաշ լուսոյն. նա և
լոյս նորա քաղցրահայեաց ամենեցուն ի
տեսանել, և ոչ հարկանել շլացուցա-
նէր զհայեցողսն առ նա որպէս արե-
գակն: ... Եւ առ վաղիւն հրամայեաց
թագաւորն ընթեռնուլ զհրովարտակն՝
զիւրն և զայլոց թագաւորացն՝ որք էին
ամենեքեան մի ազգ յորդուցն Արրահա-
մու: Եւ իրրե ծանեաւ խորհրդով զի-
րացն զօրութիւն, վաղվաղակի առաքեաց
առ նոսա՝ փութանակի զայլ առ ինքն:
Եւ եկեալ ընթերցան իւրաքանչիւր ըզ-
գրեալսն առ իւրեանս ի թագաւորէն
Հռովմայ, և ընկալեալ յօժարութեամբ
զհրաման աշխարհագրին, առնելով զայն
ըստ հաճոյից նորա ևս առաւել քան զոր
խնդրէրն: Օ՛ն անդր և ինքեանք ժողո-
վեալ զամենայն իմաստունս և զմոզս, և
բացեալ զգիրս իւրեանց՝ քննելով ի վե-
րայ աստեղն երևելոյ, և գտանէին զպա-
տուէրս նախնի հօրն իւրեանց Արրահա-
մու. այլ և ծանեան իսկապէս զառածն
Բաղասամայ, զոր և ամբարձեալ զճայն
իւր նախագուշակ լինելով զալստեան
որդւոյն Աստուծոյ, որ և ասէ իսկ.
Ծագեսցէ աստղն Յակովբայ, այսինքն
Բանն ի ծոցոյ Հօր, և յարիցէ այր

յիւրայելէ. զմարմինն ասէ, զոր էառ ի սրբոյ կուսէն:... Այլ և հրամանն մեծ արքունի փութացուցանէր զմեծամեծ իշխանսն վասն աշխարհագրին, ևս առաւել վասն երկարածիգ ճանապարհին: Ուստի և զերիս ամիսս պատրաստեցան ամենայնիւ զնալ զճանապարհայն. նա և թողեալ իւրարանչիւր ի նոցանէ վերակացուս ի գաւառս իւրեանց, կատարել զհրաման աշխարհագրին խնդութեամբ բազմաւ: Ուստի և ի Բարձրելոյն Աստուծոյ վարկանէին զելս իրացն իրրև զիմաստունս և զճանճարեղս: Իսկապէս և յարդեանցն է իմանալ զիմաստս քաջութեան նոցա առ ամենեւեան: Վասն զի յորժամ եկն Աղեքսանդր Մակեդոնացի յԵրուսաղէմ, և եմուտ ի տաճարն տեառն և երկրպագեաց անդ Աստուծոյն Իսրայէլի, և ամբարձեալ զաչս իւր յերկինս և ասէ մեծաձայն. Մեծ ես Տէր, ամենակալ Տէր. և ընծայեաց ի տաճարն անօթս ոսկոյ և արծաթոյ... Եւ իջեալ ի Բարեղոն անհուն զօրօք բազմօք, և հարեալ զարքայն Բարեղոնի զԳարեհ և զամենայն զօրս նորա սպանմամբ սրոյ: Եւ լուեալ զհամբաւն բարի զոր արար ի թագաւորն Գոգայ և Մոգայ՝ Սամաղիէլ և Կաաաուն և ամենայն ազգ որդւոցն Արաշամու... Եւ Աղեքսանդր ելեալ ի Բարեղոնէ՝ զնաց յաշխարհն նոցա: Եւ իրրև լուան, ելին ընդ առաջ նորա սիրով թագաւորն Գոգայ Սամաղիէլ և թագաւորն Մոգայ Կաաաուն՝ տասնեքին ընկերօք իւրեանց, և կառօք և հեծելօք աւելի ևս քան զերկոտասան բիւրս, և նա ընկալաւ զնոսա մեծաւ պատուով, և ողջունեալ զմիմեանս՝ արար նոցա ուրախութիւն զբազում աւուրս: Եւ նորա շնորհ ունէին նմա վասն տաճարին տեառն և վասն քաղաքին Երուսաղէմի: Եւ առաջնորդեալ նմա՝ անցուցին զնա յայնկոյս գետոյն Գեհոնի. և կոտորեցին զամենայն թուրքաստան և զՀնդիկս վերին, իրրև վրէժխընդիր լինելով թագաւորացն Գոգայ և Մոգայ, զոր և նենգութեամբ կորուսեալ էին նորա յառաջ ժամանակաւ, զոր և

կանխաւ ասացար: Եւ օժանդակեալ իջին յամենայն աշխարհն Հնդկաց: Աղեքսանդր արքայ իրրև զօրացեալ եղև նոքօք. և մենամարտեալ ընդ Պովրոս հսկայ՝ սպան զնա՝ տիրելով տանն և աշխարհի նորա: Եւ շրջապատեալ ընդ արևելեան հիւսիսական աշխարհն, և գտեալ ամպարըշտեալ զազգս և զազինս իրրև քսանևչորս թագաւորութիւնս, և հաւանեցուցեալ զնոսա սրով. սակայն ոչ կոտորեաց ի սպառ, վասն զի յագեալ ևս էին արեամբ ամպարըշտացն, և իրրև ազդեալ նոցա յԱստուծոյ, զի ոչ էր իսկապէս ծագելոց առ նոսա լուսաւորութիւն փառաց աւետարանին Քրիստոսի. և տարեալ արգելեցին զնոսա ընդ մեծամեծ լերամբք արևելեան և հիւսիսի ծովապատ. և փակեալ կնքեցին մարգարէութեամբ. Մի ևս ելանել նոցա մինչև ի ժամանակսն վերջինս, որպէս և ասէ իսկ: Եւ հարկաւոր է դառնալ ի կարգ առաջին պատմութեան: Աստանօք էր թիւ Օլոմպիսթին, զոր կարգեալ էր Երբրայեցւոցն, զոր իմաստունքն Յունաց Բեստեքեստոն անուանեն, և Հայք՝ նահանջ կոչեն, էր հարիւր վաթսուն և եօթն, և ի գարնանային հասարակածն, և պատկեր աւուրն կիրակէ. ելին ի ճանապարհ՝ իրրև պատշաճ և շնորհաւոր համարելով ըստ զիտութեան իւրեանց: Օն անդր և յառաջեալ թագաւորն Գոգայ Զանուակ՝ որդի Արտուակայ (բ. օր. Արտուակայ), յազգէ Եմբանայ, և Աշխալ թագաւոր Մոգայ՝ որ և նա յորդւոցն Եմբանայ՝ յորդւոցն Արաշամու, որ էր անդրանիկ ի Քետուրայ. ելին սորա քսան և չորս հազար հեծեալս երիվարօք ուրոյն ի հետևակ զօրաց և ի սպասաւորաց նորա, որպէս օրէն է թագաւորաց: Արին ընդ իւրեանս կնդրուկս՝ որպէս Աստուծոյ, և ոսկի մատանի՝ որպէս թագաւորի՝ խաչանման յօրինուածով. ընդելուզեալ ախամբք պատուականօք, և զմուտս անուշահոտ և մեծագին՝ իրրև մեռելոյ, և անթիւ զանձս բազումս՝ ի պէտս թագաւորական ծախուց երկայն ճանապարհին. զի ուր և

զնասց
պարգ
յիջև
որպէս
Եկասն
ւորք
րին և
Այլ և
Արտու
րեստա
նորա
և Մա
ժաստ
րինին
Տարս
զինեց
բարցն
վիմբ
և նոք
Սարայ
Ուս
բաստ
Զահա
որպէս
և իմա
բաստ
զիմաս
ճանմ
գելով
ըստ ի
ցանէի
պարգ
կերակ
անդր
իրաց
եալ
հրաշա
քային
յաւան
րոց. ն
հարցն
ընդ կ
Եւ աս
բերել
ի խառ
թիւնն
ԹԱԳ

ալ իջին
քսանդր
նորոք.
հակայ՝
շխարհի
հեղեան
ամպա-
քսանե-
անեցու-
կոտու-
ևս էին
ազդեալ
վայպէս
փառաց
ալ ար-
երամբք
և փա-
Մի՛ ևս
ն վեր-
աւոր է
ւթեան:
ն,՝ զոր
իմաս-
անուա-
էր հա-
զարնա-
ւուորն
և պատ-
ատ զի-
յառա-
ն՝ որդի
յազգէ
գայ՝ որ
ցնն Ա-
ֆետու-
հազար
հետեակ
որպէս
ւրեանս
կի մա-
հանման
բք պա-
տ և մե-
գանձս
ն ծա-
ուր և

գնասցեն, կարասցեն պարգևս մեծամեծս
պարգևել ամենեցուն ի ճանապարհ և
յիջևանս՝ իրրև անուն բարի ժառանգելով,
որպէս և վայելէր նոցա: Այլ և յազգէն
Եկսանայ՝ Արև և Զառզ, որ են թագա-
ւորք Պարսից և Մարաց, նոյնպէս արա-
րին և նոքա գանձիւ և զօրօք բազմօք:
Այլ և ի ցեղէն Մաղունայ՝ Զարեհու և
Արտաշիղ՝ թագաւորք Պարթևաց և Ասու-
րեստանեայց. նոյնպէս պատրաստեցան և
նոքա: Իսկ ի զարմէն Մողոնայ՝ Աշրակ
և Մարագ, որ և նոքա թագաւորք Խու-
ժաստանեայց՝ արարին ըստ կարգելոյ օ-
րինին: Իսկ ի սերէն Եղրոկի՝ Ահիշախ և
Տարունայ՝ թագաւորք Թարսսի և կղզեաց
զինեցան և նոքա ընդ սահմանեալ եղ-
բարցն իւրեանց: Այլ և յարմատոցն Սո-
վիմբայ՝ Մարեի (Մարիսի) և Աշիր՝ որ
և նոքա իսկ էին թագաւորք Արաբայ և
Սարայ վերնոյ, ի կողմանս հիւսիսոյ:

Ուստի և պարծանօք զամենայն պատ-
րաստ արարին ըստ անդրանկան եղբորն
Զահտունայ՝ թագաւորին Գոգայ: Այլ և
որպէս էին նոքա ամենեքեան քաջարիք
և իմաստունք, նոյնպէս և գային պատ-
րաստարար՝ յառաջընթացս առաքելով
զիմաստունս և զհզօրս հետի՝ աստուա-
ծանման աստեղն. և վերջապահս կար-
գելով զարս հանձարեղս և զարիականս՝
ըստ իջևանացն հասելոց: Եւ ընդ որ ան-
ցանէին՝ զմեծամեծս ընծայեալ զանազան
պարգևօք նորագունօք, նա և զքաղցեալս
կերակրէին բազմազան խորտկօք... Օն
անդր և քարոզ կարդային վասն որոյ
իրաց և հետեւէինն: Եւ ամենեքեան լը-
ւեալ և տեսեալ զնոսա այլ և զաստղն
հրաշափառ, տային փառս նորածին ար-
քային...: Եւ զի գիտէին ևս ի զրոց և
յաւանդութենէ թէ ո՛յք էին նոքա և յո-
րոց. նա՛ և զճանապարհն ընդ որում և
հարցն նոցա հասանէր զնալ յարեալս՝
ընդ կողմն հիւսիսի, ի Գոգ և ի Մագոգ:
Եւ աստանօր մինչ գային՝ ի նոյն հետս՝
բերելով զնոսա աստեղն, և իրրև եկին
ի խառան քաղաքն՝ ի հայրենի բնակու-
թիւնն իւրեանց, և գտեալ անդ յառուա-

րեան ազգէն իւրեանց՝ ինդացին յոյժ. և
ընծայեալ զնոսա ոսկով և արծաթով, և
պատմեցին նոցա զոր ինչ արար ընդ
նոսա Աստուածն Արրահամու, Իսահակայ
և Յակոբայ՝ հարցն իւրեանց...:

Եւ եհաս համբաւ զալստեան նոցա
յեղեսիա՝ առ Արգար թագաւորն Հայոց,
և նա ել ընդ առաջ նոցա. և էր մանուկ
տիօք, որ և ի նմին ամի ընկալիալ էր
զթագ պատուի ի մեծ թագաւորէն Հայոց.
և բերեալ զնոսա մեծաւ պատուով՝ ե-
մուտ ի քաղաքն Ուրհայ. և արար նոցա
ընդունելութիւն մեծ, և զիւրաքանչիւր ի
թագաւորացն ընծայեաց նմանապէս. և
նոքա ի մեծազին ականց արարին նմա
փոխադարձ սիրոյն: Եւ փութային զնալ
հասանել որում ցանկայինն: Եւ նա ե-
լեալ յուղարկէր զնոսա երգովք և պա-
րասաց դասիւք և հացկաց կատակօք, և
խաղարկեալք արամբք ճարտարօք զբո-
սանս առնէր նոցա: Եւ իրրև հեռի եղեն
ի քաղաքէն իրրև միջօրեայ ճանապար-
հաւ, հարցանէին ընդ Արգար, զի նա ու-
սեալ ևս էր ի հնարուն ժամանակազրաց,
թէ յորձում վայրի կոտորեաց Յովար
գերկոտասան հազարսն ի հեթանոսաց,
և զթագաւորսն. և զԱսորիս՝ հրձիգ և
զՄիջագետս Սորան (բ. օր. Սորան). և
նա հարցեալ ընդ ատենադպիրսն, և նոքա
ցուցանէին ի բացեայ զձորն Աղտից. և
նոքա ընդ այն նայեցեալ՝ տային փառս
Աստուծոյ Իսրայէլի հարցն իւրեանց: Եւ
աղաչէին զԱրգար դառնալ անդրէն. և
նա ոչ առ յանձն, այլ եկեալ ընդ նոսա
մինչև ի Գետն Եփրատ, և տեսեալ զքա-
ղաքն որ յայնկոյս գետոյն կոչի Զաղմաւ,
զի այն էր քաղաք Գաբի, զոր շինեալ
յորինեաց առ Եփրատ գետովն, որպէս և
ուսեալ ևս էր յԱստուծոյ վասն իւր, ա-
սելով. Եղից ի ծովու զձեռն նորա, և ի
վերայ գետոց զաջ նորա: Եւ աստղն
արփիափայլ եկաց ի միջասահմանն ի
վերայ մեծայաղթ գետոյն, ուր խաղը նա-
ւացն լինէին՝ աներկիւղ պահեալ զնոսա:
Եւ հրամայեաց Արգար արքայ բերել զա-
մենայն նաւս և զնաւակս ի վերուստ ի

վայր իջանելով և ի ներքուստ ի վեր ձգելով զամենայն գետոյն: Եւ անցուցին զամենեսեան անվնաս, և Տէր ինքն էր ի մէջ նոցա, և աստղն լուսապայծառ հովանի էր նոցա: Եւ Արգար տուեալ զանձս բազումս ի մեծ արքայն Չափտուն՝ ընծայել զնորածին արքայն, և ան ի նմանէ՝ երկրպագել ընդ նմա. և ինքն ողջունեալ զնոսա՝ դարձաւ ի տուն իւր:

Օն և անդր և նորա յուզի անկեալ զնացին ընդ աստուածադիր սահմանս՝ որ յառաջագոյն լեալ ևս էր Իսրայէլի, գային ընդ այն առաջնորդութեամբ աստեղն՝ որ և ինքն էր զօրութիւն Աստուծոյ: Եւ ետեալ ի Պաղեստին և Գերերայ, և հասեալ ի ծովն Տիրերեայ, և եկեալ ի քաղաքն Սամարիայ. և հռչակ հարկանէր համբաւ զալստեան նոցա ի մեծ մայրաքաղաքն Երուսաղէմ, և յամենայն Հրէաստան և որ զնովաւ ... և ասեն. Ո՛ր է որ ծնաւ արքայն Հրէից, և այլն: Եւ նորա (Երուսաղէմացիք) երկուցեալ ի բազմութենէ զօրացն, փակեցին զդուռնս քաղաքին ... Եւ Հերովդէս խոստացաւ պատիւ մեծ առնել նոցա սիրով, և ինքն խորհէր հանդերձ զործակցոյն իւրով սատանայիւ. և պատրաստեաց առ ժամայն բազում և ազգի ազգի ղեղս մահաբերս, թերևս կարասցէ կերակրօք և ըմպելեօք կորուսանել զնոսա: Եւ զիւրոզ ընդ Հերովդէս խնդրէին վասն մանկանն արքայի՝ իմաստունքն և հզօրքն, որ զամիսս երեքտասան յուզի անկեալ գային անմուլար և ուղիղ ճանապարհաւ ի հիւսիսոյ, իրրև առիւթելով յաջոյ կողմանէ ի հարաւ՝ մինչև ի քաղաքն Երուսաղէմ. վասն զի աստղն հրաշափառ բերեալ մինչև ի դուռն քաղաքին, որ յարեւելս կոյս, անհետ եղեալ ծածկեցաւ ի նոցանէ ... Վասն այնորիկ տնօրինեալ ծածկէր Աստուած զաստղն, զի քահանայք և զպիրք ժողովրդեանն բերանօք իւրեանց վկայեսցեն վասն զալստեան Օծելոյն ...:

Եւ նորա իրրև լուան ի թագաւորէն՝ զնացին. և իրրև շուրջ ածեալ զքաղաքաւն՝ ի հիւսիսոյ կողմանէ՝ եկին մինչև

ի դուռն Սիոնի, որ հայի ընդ հարաւ և տանի ի Բեթղեհէմ, և ահա աստղն՝ զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա մինչև եկեալ եկաց ուր էր մանուկն՝ յաստուածընկալ յայրին, որ և ի նախնումն տուն Եփրոնի կոչեցաւ. ուստի և Եփրոն թարգմանի՝ հող նոցա ի մերումս: Եւ իրրև տեսին զաստղն՝ խնդացին յոյժ ուրախութիւն մեծ: Օն և անդր հաւատով զրեցին ի սիրտս իւրեանց, այս է աստղ ծագեալ ի Յակովբայ, զոր ասաց ազգայինն մեր Բաղասամ, այլ և զոր ուսացն յաստուածընտիր հօրէն մերոյ յԱրրահամէ ...: Այլ և ի նմին ժամու մինչ տակաւին ի դուրս քաղաքին էին, և հրամայեաց թագաւորն Գոգայ՝ Չահտուն՝ հարկանել զփողն, արգել աննելով ամենայն զօրացն, և ասաց երկոտասան թագաւորացն՝ իջանել յերկավարացն. նախ ինքն իջանելով և բացեալ զգլուխն և հանեալ զկօշիկս. նմանապէս արարին և նորա՝ բոկ և հետիոտս գնալով մինչև յարձանն զումբեթաձև՝ զոր կանգնեալ Յակորայ ի վերայ դամբարանին Հոաքելի, առ յիշատակ նմայ: Եւ իրրև անցին ընդ այն յառաջ իրրև ասպարէզ մի, և խոնարհեալ աստուածատեսիլ աստեղն մերձ առ նոսա. ուստի և կարծէին ձեռամբ հասանել ի նա: Եւ քաջապէս նկատեալ տեսին բազմեալ ի միջի նորա տալիթայ՝ որ բարձեալ ունէր մանուկ տղայ ի զիրկս իւր: Եւ դարձեալ հրամայեաց, և հարկանէին զփողն արգելման. և ասաց քաջարանցն առ հասարակ՝ իջանել ամենեցուն, և լինել բացազլուխ և բուկանաց հետիոտս. և եթէ ոք գտցի արտաքոյ հրամանին՝ մեռցի: ... Եւ իրրև մերձեցան ի Բեթղեհէմ՝ հարկանէին ըզփողն իջանելոյ և հանգստեան: Իսկ Բեթղեհէմացիք երկուցեալ գային ընդ առաջ նոցա՝ երկրպագելով, այլ և զարհուրեալք ևս ի տեսննէ աստեղ և յազքանագեան բազմութենէ զօրացն: Իսկ թագաւորն մեծ Չահտուն պշուցեալ ընդդէմ աստեղն, որպէս թէ ընդ որ յառաջնորդեալ տանիցի զնոսա, և նա խոնարհեալ մերձ յերկիր՝

դիմակ մի, և մինչև էր Յորբաբարա և զտարաբար հոն նուկն երից յայրն ընդ Նաբոքառեբ և ի տեսննէ թագաւորն աստեղն զարտաճառաւ թիւ և որ լորաց ինչ, զօրքն հլցէ մեռանցէ և յաստեղ էր յանախ գայ՝ նայ, Արևն սանից սոքա աստի Մարի սուս ի երթայ երկուց տեղն, զուցէ և տարածոց ընդդէմ մերձ վառեա

զիմակ նոցա լինելով, որպէս առնաչափ մի, և առ սակաւ սակաւ յառաջ գնալով մինչև ի դուրս հովանոցին՝ զոր շինեալ էր Յովսեփայ, և մտեալ անդ ի ներքոյ բարաւորին, և ճառագայթեալ զհովանոցն և զտունն և զայրն աստուածընկալ: Եւ զարհուրեալ օրիորդն կոյս՝ ունելով զմանուկն Յիսուս ի գիրկս իւր՝ իրրև ամսոց երից և միոյ ամի, և փախուցեալ եմուտ յայրն, կարծէր ևս թաքչել անդ: Մտին ընդ նմա Եսթեր և Սողոմէ և Մառի դստերքն Յովսեփայ, որպէս ի պատիւ և ի սպաս պաշտաման: Եւ իջեալ աստեղն ի հովանոցէն՝ եմուտ ի տունն և թագաւորքն ընդ նմայ. և ընդ աստիճանս աստուածարնակ այրին իջանէր հանդարտաբար, և պայծառացեալ լուսովն ճառագայթէր ի ներքոյ և արտաքոյ՝ իբրև թափանցիկ ելով: Անդ էին Յովսեփ և որդիք իւր. և երկրպագեցին թագաւորացն, բայց ոչ համարձակեցին խօսել ինչ, զի այսպէս օրինադրեցան ամենայն զօրքն և քաղաքացիքն. յորոյ բերանոյ ելցէ բան և կամ ճիկ ի շրթանց՝ մահու մեռանիցի, մինչև հրամանն արքունի հասցէ և փող հարկանի: Եւ էր մերձ ի յաստղն Չազտուն արքայն Գոգայ, որ էր յազգէն Եմբանայ, և էր ամաց եօթանասնից. և զհետ նորա թագաւորն Մոգայ՝ Աշթաւ, որ և նա ի ցեղէն Եմբանայ, և էր ամաց երեսնից. և զկնի նորա Արևն թագաւորն, և էր ամաց հնգետասնից՝ յորդոցն Եկսանայ: Եւ երեքեան սոքա մտին զհետ աստեղ՝ իջանելով ընդ աստիճանսն: Եւ յարուցեալ սուրբ կոյսն Մարիամ՝ ունելով զկոյսն զմանուկն Յիսուս ի գիրկս իւր: Եւ աստեղն դէմ եղեալ երթայր երեսօք ի մանուկն Յիսուս: Եւ երկուցեալ կոյսն սուրբ ի տեսնէն աստեղն, թէպէտ և քաղցրատես ևս էր, գուցէ ասէ, փնաս ինչ լինիցի մանկանն. և տարեալ նստուցանէր զբարձոն արարածոց ի գլուխ մարոյն, իբրև բազմելով ընդդէմ տաճարին Աստուծոյ, և ինքն մերձ կալով որպէս պահապան: Եւ վառիվառեալ աստղն լուսաճաճանչ երիցս

անգամ, և եկաց ի վերայ գլխոյ մանուկանն Յիսուսի: Եւ իսկոյն հոտ անոյշ բուրեաց առ հասարակ ընդ ամենայն տիեզերս՝ ըստ այնմ որ ասէն. Նարդոսն ետ զհոտ իւր:

Եւ մատուցեալ թագաւորն Չազտուն՝ երկիր պագանէր ի վերայ երեսաց իւրոց, և զհետ նորա Աշթաւ, և զկնի նորա Արևն. և անցեալ կային ձեռս ի կապ՝ աչք ի նա հայելով, և յայնչափ ինդոյն արտօսր բազում ցօղէին, իսանդադատելով ընդդէմ մանկանն. այլ և աղերսանօք և իմաստական բանիցն զգուանօք, որպէս և վայելէր արքայի և Տեառնորդոյն՝ խօսէին ընդ նմայ: Եւ իջեալ երիցս անգամ և այլ թագաւորքն կարգ ըստ կարգի երեք երեք երկրպագեցին և նոքա՝ նմանապէս առաջնոցն, և կացին ի կարգի ձեռս ի կապ լինելով ըստ օրինին: Ուստի և արքայն Չազտուն նախապատիւ հրամայեաց լինել թագաւորին Թարսսի և կղզեաց՝ պատարագս մատուցանել նմայ. ըստ այնմ թէ թագաւորք Արարայ և Սարայ պատարագս բերցեն յոսկւոյն Արարացոց: Եւ այլուր. Ամենեքեան ի Սարայ եկեացեն՝ պատարագս բերելով կրնդրուկ, ոսկի և զմուռ՝ խորհրդով աստուածատուր իմաստութեանն. որպէս լուան իսկ յազգական վարդապետէն իւրեանց Բաղասամայ, որպէս այն զի ասաց. Մեծասցի թագաւորութիւն նորա քան զԳոգայն: Ուստի և իմացան զնա թագաւոր գոլով, և զի պատմեաց՝ թէ ծագեացէ աստղ ի Յակորայ, և այլն...: Ուստի և մատուցին նմայ պատարագս կնդրուկ՝ որպէս Աստուծոյ, և ոսկի մատանի՝ խաչանման ակամբք պատուականօք ընդելուզեալ՝ որպէս թագաւորի, և զմուռ՝ որպէս մեռելոյ: Օ՛ն անդր և անցեալք ի հանդիսի հրամանաւ մեծ թագաւորին Չազտունայ՝ թագաւորն Թարսսի և կղզեաց, Արարայ և Սարայ՝ Ահիշըախ, Տարտնահ և Աշիւր¹, ունելով զընծայս

1. Կարդալու է Արարայի:

խորհրդականս ի ձեռս իւրեանց պատրաստարար, և եղին ի մտւոյն առաջի Տեառնորդոյն արարածոց, և ինքեանք ամենեքեան անկան ի վերայ երեսաց իւրեանց՝ երկրպագելով մանկանն Յիսուսի: . . .

Եւ մինչ նորա զայս ծածուկ խորհրդով մաղթանս առ Աստուածն իսրայէլի մատուցանէին, և մանուկն Յիսուս քաղցրահայեաց և աստուածաման տեսեամբ նայէր ընդ նոսա լրջմտութեամբ, և ապա խանդաղատեալ ի վերայ եւրնծայ պատարագացն, և ձգեալ զբազուկան աստուածային և յինքն ամփոփեալ՝ արկանէր ի վերայ բարձուցն ցնծալից: Եւ տեսեալ թագաւորացն ուրախացան յոյժ, և զրեցին ի սիրտս իւրեանց՝ ընդունելի լինել պարգևաց նոցա, և ի ձայն բարձրաղաղակեցին՝ աւրհնելով, գովելով, բարբրանելով զԱստուածն Արբազամու: . . .

Եւ առժամայն փոյթ ընդ փոյթ հրամայեցին հարկանել զամենայն փողոսն ցնծութեան և զամենայն երգարանս: Եւ ամենայն զօրացն առհասարակ իբրև ընդ մի բերան փառս ի վեր առաքէին բարձրելոյն: Ուստի և կարգ ըստ կարգի յօրինեալ կային ամենայն գովիչք թագաւորացն, և յայնչափ գոչմանէ փողոցն և յահազին բարբառոց զօրացն շարժեալ ևս լինէր լայնատարած սահմանք Բեթղեհէմի՝ մինչև զալ աղաղակ գոչմանն և հասանել յԵրուսաղէմ: Եւ ապա ևս առաւել զողայր Հերովդէս ի գոչմանէ փողոցն և զօրացն: Որ և ի նմին ժամութագաւորքն երկոտասան դարձան առ Մարիամ մայրն Յիսուսի, և երկրպագելով հարցանէին զողջամբ լինելոյն, նմանապէս և սուրբ քահանային Յովսեփայ և նորայոցն, և յոյժ մեծարեցին զնոսա՝ իբրև զընտրեալս և զմերձաւորս Աստուծոյ:

Էր ժամ երրորդ և պատկեր աւուրն միաշարաթ իբրև յանդիման եղեն Տեառն: Օն անդր և մինչև ցերեկոյն ոչ թողացուցին ումեք մտանել անդ, բայց միայն թագաւորքն երկոտասան կացին ի սպաս պատուի Տեառն: Ուստի և ի նոսա նկարեցաւ խորհուրդ երկոտասան Առաքելոցն:

Նա և զօրքն ամենայն կային փողովք և ազգի ազգի արուեստական երգարանօք: . . .

Եւ առ վաղիւն դարձեալ մտին երկոտասանքն երկրպագելով: Եւ յառաջեալ մեծ թագաւորն Զահտուն, և զհետ նորա Ալթալ, և զկնի նորա Արեն, և ունէին զգանձս յանօթս ոսկեղէնս, և բացեալ զայն՝ ցիրեցան առնէին զօրն ողջոյն ամենայն թագաւորքն ի վերայ տանեաց այրին և հովանոցին: Եւ եկեալ արք և կանայք, ծերք և տղայք Բեթղեհէմի և որք ընդ աշխարհագրաւն մտեալ էին ի զիրս արքունի, ժողովէին զգանձս առ ի պէտս կենաց՝ մինչև յազեցան: Եւ այնպէս արարին զաւուրս եօթն՝ մինչև կատարեցին զօրքն ամենայն զերկրպագութիւն արարչին Յիսուսի, այլ և ամենեքեան արժանացան տեսանել և երկիր պագանել անտեսանելոյն հրեշտակաց:

Օն և անդր, կացեալ զաւուրս տասն, և պատրաստեցան դառնալ անդրէն առ Հերովդէս, որպէս և ժամ եղեալ էին նմայ: . . . Այլ և օն անդր յուր ի տաներորդ աւուրն զրեցին պատասխանի կայսերն Օգոստեայ՝ վասն աշխարհագրին, և վասն գնալոյն իւրեանց անդ, ետուն և զհրովարտակն Արգարու, զի ընդ այն ժամանակս հնազանդեալ ևս էին Հայք և Պարսիկք և Ասորեստանեայր Օգոստեայ կայսերն, և ընծայեալ զառաքեալն առ ի նմանէ ուղարկեցին զնոսա: Եւ ինքեանք հրաման առեալ ի տեսեանն չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

Ուստի և ի տասն Մայիս ամսոյ անցեալ ընդ Յորդանան, ուր Տէրն իսկ յետոյ մկրտեցաւ, և գնացեալ ի Դամասկոս, և անտի անցեալ ընդ գետն Եփրատ, ի հուն անցիցն թագաւորացն Քաղդէացոց՝ մինչ գերէին զԵրուսաղէմ: Եւ հասեալ ի մեծն Բաբելոն, և ել արքայն Արշարի ընդ առաջ նոցա բազում փառաւորութեամբ, որպէս օրէն է Քաղդէացոց՝ առատածոն լինել ի մտանել թագաւորի և յելաննէն: Եւ նորա պատ-

մեցին
աշխա
նոսա
տուած
բազու
ի Բա
և ընդ
որ ա
Աստու
րեանց
Եւ
սանքն
կենդա
կագոր
Քրիստ
ռաքել
Հոգւոյ
Պարսի
րեստ
նի, օն
մենայ
կոտա
ինքն
Գոգայ
զԱլթա
Հայոց
նոցա
սրբոյ
հրամ
վերայ
տոյ,
սարկա
Քրիստ

Յիշ
բելէն
ինչ հ
բևոր
մամբ
լով, յ
մական
նական
քննութ
տել կ

մեցին նմա զոր տեսին և վասն որոյ աշխատեցան: Եւ Արշաւրի երանեաց ըզնոսա, որ արժանի եղեն այնպիսի աստուածային տեսլեանն: Օ՛ն անդր և բազում պատուով յուղարկեալք և նոքա ի Բաբելոնէ՝ եկին յաշխարհն իւրեանց. և ընդ բազում աշխարհս և գաւառս ընդ որ անցանէին՝ քարոզէին վասն նորածին Աստուածորդոյն, զոր և աչօք իսկ իւրեանց տեսին և ի գիրկս ընկալան

Եւ ինքեանք թագաւորքն երկոտասանքն հրամանաւն Աստուծոյ կացեալ կենդանի, մինչև ելին Առաքեալքն փրկկազործ աւետարանաւն քարոզել զՅիսուս Քրիստոս: Եւ եկն Արդէ՛ աշակերտ առաքելոյն թաղէոսի՝ առ նոսա հրամանաւ Հոգւոյն սրբոյ, քարոզելով զՔրիստոս Պարսից և Մարաց և Պարթեաց, Ասորեստանեայց, Խուժաստանաց և Բաբելոնի, օ՛ն անդր և Գոգայ և Մոգայ և ամենայն գաւառաց՝ որ ընդ ձեռամբ երկոտասան թագաւորացն ևս էին: Որ և ինքն իսկ Արդէ մկրտեաց զթագաւորն Գոգայ՝ Չահտունն, և զթագաւորն Մոգայ՝ զԱշթաւ, և զթագաւորն Պարսից և ըզՀայոց զԱրևն, նմանապէս և զընկերան նոցա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. զի նա եղև անդ առաջնորդ և հրամանատար, հաստատելով եկեղեցի ի վերայ վիմին, անդրդուելի վիմին հաւատոյ, և կարգեաց անդ քահանայս և սարկաւագունս, քարոզելով նոցա ըզՔրիստոս Աստուած » :

*
* * *

Յիշատակարանս քաղուածօրէն մէջ բերելէն վերջ՝ ներուի ինձ ընել հոս ինչ ինչ համառօտ դիտողութիւններ անոր կարևոր մասանց նկատմամբ, — զորս դիտմամբ նոտրագրեցինք, — Չեզ վերապահելով, յարգելի բարեկամ, անոնց պատմական, աշխարհագրական և ստուգարանական (etymologique) մանրամասն ըննութիւնը և կամ ճշդութիւնը: Ա. Դիտել կու տամ՝ որ գրուածիս մէջ ընդ-

հանուր կերպով տիրող գաղափարը — որ բացայայտ կերպով կը շեշտուի գրեթէ ամէն զրոյցի մէջ — այն է, թէ ոչ միայն Արրահամու օրինաւոր յաջորդաց և իսրայէլի երկոտասան ցեղերուն, այլ և Քիտուրայ կամ Կենտուրէն կողմնակի կերպով սերեալ ազգերուն մէջ ևս պահուեցաւ՝ որդւոց որդի և դարուց ի դարս՝ թէ՛ ճշմարիտ աստուածապաշտութեան և թէ՛ Մեսիային կամ Աստուածորդւոյ մարմնապէս ծննդեան գաղափարն՝ ի սուրբ և յանարատ կուսէն, նշանակաւ հրաշափառ աստեղն: Եւ այդ բարձրագոյն ծանօթութիւնը, զոր Աստուած յայտնեց Արրահամու, տարածողներն և պահպանողները — նաև հիթանոս ազգերու և արևելեան աշխարհաց մէջ — եղան Քիտուրէն ծնած Արրահամու վեց որդիքը: Այս ըստ ամենայնի պատմական է, վասն զի Ծնդ. ԻԵ. 1 — 6 վկայութեան համաձայն է. որուն վրայ հաստատուած Ս. Հարք, և մասնաւորապէս Եփրեմ Ասորի (Մեկն. Ծնն. տպ. վենետկոյ, էջ 85) կը գրէ. « Եւ զի ա՛ռ Արրահամ կին յետ մահուան Սառայի, զի ի ձեռն որդւոց իւրոց, որ լինին յազգս և յազինս և ի տոհմս հիթանոսաց, սփռեցան տարածեցան հաւատք ճշմարտութեան նորա յամենայն գաւառս: Արձակեաց զնոսա առ յինքննէ, զի քարոզեցեն զհաւատս ճշմարտութեան հօրն իւրեանց »:

Երկրորդ կարևոր կէտն կեղծ Եպիփանի աւանդածին, — զոր ևս կ'ախորժիմ սակայն ծագումով հայկական ևս անուանել, — այն է՝ որ Քիտուրէն ծնած այդ վեց որդւոց ազգախառնութենէն, որոնք գաղթեցին յԱրևելս, յառաջ եկած ըլլան Պարսիկք, Պարթևք և Հայք. և Պարսից Արեմենեան թագաւորաց առաջինը՝ Կիւրոս՝ ուղղակի զնելով « ծնեալ ի վեցս սեան որդւոց Արրահամու » (այսինքն է՝ յազգաց քիտուրածին որդւոց), անուղղակի կերպով Պարթև և Հայ Արշակունիները ևս՝ Արեմենեան ընդհատեալ Հարստութեան իբրև ազգակից և շարունակութիւն կարծել կու տայ մեզ. որ

շատ հաւանական է: Յիրբւի, թէպէտ և կիրոսի ֆետուրածին ըլլալու մասին Ծն. Գիրքը լռած է, սակայն Բ. Մնաց., Եզրի, Դանիէլի և յատկապէս Եսայեայ (զլ. ԽԵ. 1-4) անոր վրայ այնքան խօսելն իսկ կոտան մ'է ըստ ինքեան. այսինքն թէ՛ Աստուծոյ օծեալ Հրէից այդ ազատաբարը՝ հոգևորական իմաստով ֆրիստոսի փրկչին օրինակ ըլլալէն զատ՝ մարմնաւոր ազգակցութիւն մ'ալ ունեցած ըլլայ հրէական ազգին հետ, ինչպէս որ կ'ենթադրէ գրուածիս հեղինակը: Իսկ Հայոց և Պարթևաց մասին աւանդածն ոչ միայն հաւանական է, այլ և ունի իրեն իրև կոտան պատմական վկայութիւններ:

Մեծն Վարդան (տես Մեկն. Ծննդոց) այսպէս կը գրէ. «Իսկ Աբրահամու առնուն զկենտուրա, որ է իսկիւայ, զի ամենայն ազգ սմա է երկնաւոր խոստումն, և մի ոք զինքն աւտարացուցէ յիւր սեփական արարչէն. ուստի ծնան վեց որդիք՝ քարոզք վեցակուսի՝ աշխարհիս. ուստի Արշակունիք և Պանրաունիք, զորս ի բաց արձակեաց յինքենէ (Աբրահամ) յարևելս, զի ամենայն յոյս իցէ յայն՝ որ նստին յերկինս երկնից ընդ արևելս»: Անտարակոյս Վարդան՝ Եփրեմի վերոյիշեալ վկայութենէն դուրս ճանչցեր է նաև սոյն գրութիւնը, ինչպէս ցոյց կու տան «Արշակունիք և Պահլաւունիք» կամ Պարթևք բառերը:

Անանունը՝ առ Սերիոսի (տպ. Կ. Պօլիս 1851, եր. 9) Հայկազունի հարստութենէն՝ Պարթև Արշակունիներու պատմութեանը անցած ժամանակ, հետևեալ կամուրջը կը կապէ, որ յոյժ հետաքրքրական է. «Ի Դամասկոսէ ասեն՝ զընացեալ զՄարսակն՝ զընդոժինն Աբրահամու՝ փախստական լեալ յիսահակայ, և եկեալ ընակեցաւ առ ոտամբ երկուց լերանցն որ հանդէպ մեծի դաշտին Արայի, յԱրագած կատար և ի Գեղ լեան:

Եւ լինին նորա երեք որդիք, Փառոխ՝ նա է Եղիազար, և Փառախոտ կոչեն զտեղի բնակութեանն. և Փառականն՝ դաշտ որսոց և արշաւանաց նոցին, որ խառնին յազգ Աբամանեկայ »:

Չնայելով որ Անանունի քով (այն է՝ կեղծ Ագաթանգեղոսեան արձանագրութեան մէջ) պահուած հայկական աւանդութիւնը՝ իր արտաքին պարագաներով անկախ է Լպիփանեանէն, սակայն և այնպէս իսկապէս մի և նոյն իրողութիւնը կը շեշտէ. այսինքն է՝ Աբրահամու ընդոժիններուն՝ Հայոց և Պարթևաց հետ ունեցած ազգախառնումը: Մով. Խոբրեանցին ընդ հակառակն երկու անգամ կը յիշատակէ մի և նոյն իրողութիւնը, և երկուքն ալ համաձայն եպիփանեան յիշատակարանին: Նախ Պատմութեան Ա. Գրքի Ա. գլխուն մէջ խօսելով Պարթևաց վրայ՝ կ'ըսէ. «Ուստի և թագաւորեաց Արշակ քաջ, որ ի զաւակէ Աբրահամու, ի քստորական ծննդոց, առ ի հաստատել բանին Տեառն առ Աբրահամ, թէ թագաւորք ազգաց ի քէն ելցեն »: Ապա Բ. Գրոց ԿԸ. գլխում ուզելով տալ մեզ Պարթև — Արշակունիներու ցեղաբանութիւնը, կը գրէ այսպէս. «յԱրամայ քսաներորդ առաջներորդ նահապետ մեզ զԱբրահամ աստուածային պատմութիւնքն ցուցանեն, և ի նմանէ եղեալ ազգը Պարթևաց: Քանզի ասէ. Յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին գփետուրայ, յորմէ ծնան Էմբան և եղբարք նորա, զոր Աբրահամ ի կենդանութեան իւրում մեկնեաց յիսահակայ, արձակելով յերկիրն արևելից: Յորոց սերեալ ազգ Պարթևաց, և ի նոցանէ Արշակ քաջ, որ ապստամբեալ ի Մակեդոնացոց՝ թագաւորեաց յերկիրն Քուչանաց՝ ամս երեսուն և մի ... և յետ նորա որդի նորին Արտաշէս ... ապա Արշակ նորին որդի ... որ և զՎաղարշակ զեղբայր իւր թագաւոր կացոյց Հայոց », ևն:

Յովսեպոս ևս (Հնախ. Ա. գիրք. ԳԼ. 15) հիմնուած Աղ. Բագմավիպի վկայութեան վրայ, հետաքրքրական տեղեկու-

1. Այս և Մ. Խորենացոյ աւանդածի նկատմամբ՝ խորհուրդ կու տամ կարգաւ Սերիոսի գիտնական հրատարակչին 5⁰ և 6⁰ Մանութագրութիւնքը՝ որ յէջ 20-24:

թիւնն
Աբրա
նութ
Աբար
Հայոց
զակցո
ներ:
հայ հ
զային
Երբ
քէն չ
երկրպ
պարզ
զաւոր
խարհ
այս բ
նոնց
սոյն
ի Պար
ազգա
շատա
դեռ
մը կը
ւանդա
թագա
մարզ
շուած
որոնք
զրոց
Հարց
զրուա
թեան
խընդի
որ ա
քէն՝
ըուի՝
ւամբ
վերլու
և ի Ս
լաւ կ
Մնաց

1. Տե
ւանդէ,
րենց ա

Փառոսի՝
կոչեն
աականն՝
դին, որ
(այն է՝
նագրու-
աւան-
գաներով
կայն և
իրողու-
աւհամու
ըթեւաց
ով. խո-
անգամ
ութիւնը,
փանեան
եան Ա.
Պարթե-
թագաւո-
ւորա-
առ ի
որահամ,
եկցեն »:
ով տալ
եղարա-
Ազամայ
ետ մեզ
ութիւնքն
դը Պար-
ւանելոյն
ն գփե-
եղարար
նութեան
սրձակե-
սերեալ
ակ քաջ,
ոց՝ թա-
մս երե-
նորին
որդի ...
թագա-

թիւններ կու տայ Քետուրէն ծնած Արրահամու որդւոց և անոնց զաղթակա- նութեան մասին՝ ի Լիբիա, և Երջանիկ Արաբիայէն մինչև Կարմիր ծով. սակայն Հայոց և Պարթեւաց հետ ունեցած ազ- գակցութեան նկատմամբ բնաւ խօսք չը- ներ: Ուստի ակներև կը տեսնուի՝ որ հայ հեղինակներու մեզ հաղորդածը՝ ազ- գային հին աւանդութիւն մ'է:

Երրորդ՝ հայկական յիշատակարաննե- րէն չորս առաջիններուն մէջ՝ Յիսուսի երկրպագութեան եկող արքայք ոչ թէ պարզաբար մոզ կը կոչուին, այլ « թա- գաւորք Մոզոց », որ ազգի կամ աշ- խարհի յատուկ անուն ըլլալ կ'երևի: Եւ այս բանս արդէն քաջ կը տեսնուի ա- նոնց առ դեսպանս Հերովդէսի ուղղած սոյն պատասխանէն. « Ասեն մոզքն. Մեք ի Պարսից եկեալ եմք՝ յարևելից, որ բուն ազգաւ Մոզք կոչուի »: Իսկ վերջին յի- շատակարանն, այն է՝ կեղծ Եպիփանը, դեռ աւելի հետաքրքրական պարագայով մը կը հաստատէ նախընթացներուն ա- լանդածը, այսինքն նոյնացնելով մոզ թագաւորներու զլխաւորները՝ Եզեկիէլի մարգարէութեան (ԼԲ. 2, ԼԹ. 6) յի- շուած Գոգ և Մագոգ անուններուն հետ, որոնք ոչ միայն այս տեղ և Յայտնութեան գրոց մէջ, այլ և Մեթոդիոսի և ուրիշ Հարց վերջաշարունակ (eschatologique) գրուածոց մէջ՝ աստուածային արդարու- թեան և ամպարշտաց կործանման վրէժ- խընդիբ գործիք համարուած են: Գիտելով որ անուանցս վերջինը՝ որուն պարսկե- րէն՝ (չ) մակ, մավ, միւղ ևս կը գը- րուի՝ միացուած է առաջնոյն հետ, իրա- լամբ ուրեմն յիշատակարանիս հեղինակը վերլուծած է զայն ի Գոգ (սեռ. Գոգայ) և ի Մոգ (սեռ. Մոգայ): Այս բանս շատ լաւ կը մեկնուի Ծննդոց Ժ. 2 և Բ. Մնաց. Ա. 4 տեղերով, ուր Գոգ առան-

ձին գոյութիւն չունի, այլ Մոգին հետ միացեալ, այսինքն է՝ ըստ Եօթանասնից թարգմանութեան՝ « Մագովգ »: Եզեկիէլ առաջին անգամ զատեր է զանոնք իրար- մէ՝ գրելով « Գովգ և Մագովգ »:

Լեզուական այս փոփոխութիւնս՝ նշան է՝ թէ այդ ժամանակ արդէն պատմական յեղաշրջութիւն մ'էս կատարուած էր հիւսիս — արևելեան այդ ազգաբնակութեան սահմաններուն վրայ. այսինքն Մոզայ ա- ճուսն և յերկուս կամ յերիս ժողովուրդս բաժնուիլն: Այս ալ ըսեմ՝ որ Մոզ, մակ, մակ անուան խոր հնութեան յայտնի նշան մ'է նոյն իսկ անոր միավանկ ըլ- լալը: Մովսիսին վերագրուած Հնգամա- տեանին մէջ մոզ անուան բնաւ չենք հան- դիպիր, այլ « գետք, իմաստուեր »: Դա- նիէլ (մարգ. Ա. 20, Բ. 2, 27, Գ. 4, Ե. 11, 15) միայն առաջին անգամ ի գործ ածեր է զայն. և ուշադրութեան արժանի կէտ մ'է Դարեհի արքունիքին ծանօթ մարգարէիս այդ անուան գործա- ծութեան և Զրապշտ մոզի երևման զու- գաղիպութիւնը:

Յոյնք և Լատինք ընդհանրապէս Մոգ անունը յուն. μάγος բառէն ծագած կը համարին, իբրև մտածող, նկատող, գի- տուն, աստեղագետ, կախարդ, և այլն. իսկ ոմանք ալ Փիլոսոփոսոսի՝ հետ հին պարսկերէն է ըսին, և mag կամ magu (քուրմ) բառին հաւասարագոր: Արդի հա- մեմատական լեզուաբանութիւնը՝ վեր- ջնոյս կողմն է:

Արդ՝ թողով բառիս նշանակութիւնը բանասիրաց, և համաձայն հայկական զրոյցիս նկատելով իբրև պատմական կամ աշխարհագրական անուն, կազմուած ի Մագ — Գոգ (= Մակ — Գոգ = Ման — Գոգ) միավանկ կրկնանուններէն, ո՛չ Հնդկաս- տանի, ոչ Արաբիոյ և ոչ իսկ Ասորբի և Գաղղեսաստանի մէջ գոյութիւն ունեցեր

Իբր. ԳԼ. վկայու- սեղեկու-

1. Տես ի վարս Ապոլոնիոսի Գիսնեայ, որ կ'ա- լանդէ, թէ հին Պարսիկը Մակ կամ Մոգ կը կոչէին Ե- րենց աստուածները, իսկ յետոյ անոնց պաշտօնէից ան-

ցաւ: 2. Տես H. Hübschmann, Armenische Gram. I. Theil, s. 195.

է, այլ որոնելի է Մարապարսիկ տէրութեան և անոր հիւսիսային սահմանաց, այսինքն է Հայաստանի մէջ: Եւ ստուգիւ այս բանս ակնբերե կը տեսնուի Մոզուց գալատեան ուղեցոյցէն (itinéraire) իսկ՝ զոր կու տայ մեզ յիշատակարանս: Սորա նախ հիւսիս արևելքէն անցնելով ի Գոզ և ի Մոզ՝ կու գան ի Խառան, որուն համար կ'ըսուի, թէ եղած էր նախկին խանձարուրք իրենց նախնիներուն, այսինքն ֆետուրէն ծնեալ վեց որդուց: Ապա շարունակելով ճանապարհը՝ կը հասնին Երզնայի կամ Ոչրնայ, ուր Արզարէն կը գտնեն արքայական և սիրալիր ընդունելութիւն: Ապա շարունակելով ուղին՝ Արզարու ընկերակցութեամբ՝ կուգան ի գետն Եփրատ, ճիշդ Զուղմա կոչուած քաղաքին քով, զոր իբր թէ Դաւիթ շինած էր, կ'աւանդուի. և Արզար հոն նաեւ բերել տալով կ'անցնէ զամէնքը յայնկոյս գետոյն, և ինքը կը դառնայ Երզնայի: Ապա կը մտնեն ի Պաղեստին՝ ըստ այնմ, «Եւ եկեալ ի Պաղեստին, և հասեալ ի ծովն Տիրեբեայ, և եկեալ ի Սամարիա»: Հուսկ ապա այս կողմէն կը հասնին Երուսաղիմ:

Արդ՝ եթէ ակնարկ մը տանք աշխարհգրարտին Ասիոյ, յայտնի կը տեսնենք, որ Հնդկաստան Պաղեստինի հարաւային կողմը կ'իյնայ յոյժ ի բացեայ, և ոչ թէ արևելեան, ուսկից եկած կ'աւանդէ զՄոզ՝ Մատթէոս աւետարանիչն: Իսկ Արարիա և Ասորիք կը մնան յայսկոյս և ի հարաւ Պաղեստինու. և հետեւար՝ հոն երթալու համար ո՛չ Եփրատ անցնելու պէտք կար կամ կարելի էր և ո՛չ ալ Երզնայի առ Արզար: Ապա ուրեմն կը մնայ իբրև բանաւոր ընդունել՝ որ Մո-

զերն ի Պարսից¹, ի Պարթևաց և ի Հայոց գալով՝ այդ ճամբան կտրեցին (Թերևս իրենց ստորակարգեալ Միջագետաց և Քաղզեաստանի և Աղիարենաց փոքրիկ իշխաններով), և թէ այդ սահմաններուն վրայ եղած էր և որոնելի է Մազ-Գոզգայ, կամ լաւ ևս Մոզայ և Գոզայ, այսինքն է ֆետուրէն ծնեալ Արքահամու որդուց նախկին զաղթակա-նութիւնն և հետ զհետէ դէպ ի հիւսիս յարևելս տարածուիլը, ազգախառնութեամբ յարեթածին կամ արիական ազգաց հետ:

Այս սահմանին մէջ է յերաւի (այսինքն ի Մարս) Մոզ կամ Մոզ գաւառը զոր կը յիշէ Հերոդոտոս, այս սահմանիս մէջ էին (այսինքն՝ Քաղզեացուց սահմանակից Հայոց մեծաց գաւառը, Մոկք և Առանձնակ Մոկս, ուր կը յիշատակուի նաև տեղի ինչ կոչեցեալ Մոզ՝ ըստ Հ. Ղուկ. Ինճիճեանի²: Այս սահմանիս վրայ է (այսինքն՝ Պարսից և Հայոց սահմանակից) «ազն և կրկիր Մոզուց», զոր կը յիշատակէ Բարդուղիմէոս Առաքելոյ վկայարանութիւնը, և այդ տեղէն է՝ որ յետ քարոզելոյն՝ Հայոց առաքեալը կը մտնէ ի Գողթան գաւառ: Առ այս յոյժ հետաքրքրական և բնորոշ է Վկայարեանս մեզ տուած ուղեցոյցը՝ նկատմամբ Բարդուղիմէոսի քարոզած երկիրնեուն: Սա նախ թաղէոս Առաքելոյն հետ կը մտնէ Հնդկաց սահմանակից Պարսից «Երևմ» քաղաքը, ուսկից թաղէոս կը թեակոխէ ի Հնդկաստան. իսկ Բարդուղիմէոս կը քարոզէ նախ ի կողմանս Մարաց, ապա Պարթևաց, ապա Պարսից և Մոզուց աշխարհը, ապա ի Գոդրան, ապա ի Հեր և Զարեանդ գաւառս Հայոց:

Գարձեալ նշանակալից է՝ նկատմամբ

1. Յովն. Ոսկերբանն ևս սոյնը կը հաստատէ երկիցս և երկոս՝ գրելով ի Մեկն. Մարթի. զի յետ ըսելոյ թէ «Յառաջ քան զրազում ժամանակս ասող երևեալ տեսանէին յերեսնց աշխարհին». ապա կը յիշէ այդ աշխարհը ևս, ըսելով. «Իսկ նա (աստղն) ի հիւսիսայ՝ ի հարաւահողմն կոյս գնայր, քանզի Պաղեստինացուց աշխարհն ի հարաւայ կուսէ Պարսից կայ... Զի

Հրէայքն ի մոզուցն լսէին, եթէ աստղն անդէն ի Պարսից աշխարհին քարոզեաց... Եւ նախ ի պարսկական քարթառոյն ուսանիցին զայն ինչ՝ զոր ի մարգարէից չկամէին ուսանել»:

2. Տես Հեախ. Հայ. հտ. Գ. եր. 52, և Մեծ Հայք, եր. 167:

Հայոց
աստ
մաս
րայ,
ուս
պիս
Հայ
ին է
բայ:
ի Հե
(Սեմ)
թիւն
նակն
տու
բու:
գաւ
որ ը
2, 00
տան
թեան
նը՝ հ
սայ՝
յառ
գաշ
նեց
կու
Ար
Ան
սեակ
նաց
Միջ
հինգ
դու
բայ
լէ»)
Այ
գեր
ի մ
բոսի՝
շուր
լու հ
անդ

Հայոց՝ Մոզոց ազգին և աշխարհի չորս աստուածներուն պաշտաման վերաբերեալ մասը, այսինքն են Հիդիու (Արևն), Սեբայ, Արես, և Պեկեայ, որոնց երկու առաջիններէն մին, այն է Արևն, կեղծ Եպիփանի գրոյցին մէջ եղած է թագաւոր Հայոց՝ յերկրպագութեան նորածին արքային Յիսուսի, իսկ միւսը՝ թագաւոր Սաբայ: Այս սահմաններուն վրայ է (այն է ի Հեր և Զարեանդ) որ Զորասատր = (Սեմ) Մոզի գրաւոր և անգիր աւանդութիւնները՝ կը շրջէին, ամենահին ժամանակներէ ի վեր, իբրև տարածողի աստուածպետական կրօնից և գիտութիւններու: Հոս կը շրջէին Բակտրիացոց թագաւորին Զրադաշտ Մոզի գրոյցները (552), որ ըստ հայ աւանդութեան Քրիստոսէ 2,000 տարի յառաջ՝ հակառակ Ասորեստանեայց և Բաբելոնացոց՝ միաստուածութեան ազանդը հնարեց, կոչելով Զրուանը՝ հայր աստուածոց. և ըստ Սուրբասայ՝ Տրոյիոյ պատերազմէն 500 տարի յառաջ կ'ապրէր: Հոս (այսինքն է Արայի դաշտին կամ Այրարատի մէջ) տեղի ունեցեր են Լա (= Արմենու) Մոզի բնակութիւնը, զոր կը յիշատակէ Պլատոն, Արայի և Յարալէզներու գրոյցներով, զոր Անանունը՝ Աբրահամու ընդոծին Մարսեակի և Արմենակայ հետ թերևս նոյնացուցած է: Հոս (այսինքն Պարսից և Միջագետաց Հայոց) մէջ է որ երեսուն և հինգ տարի շրջած և քարոզած կ'աւանդուի Բադասմ Մոզը՝ քարոզելով Յակոբայ աստղը և Մեսիայի («այր յիսրայէլէ») գալուստն և տէրութիւնը:

Այդ եռապետեան աշխարհաց և ազգերու ժողովուրդներն են, որ կը կոչուին ի մարգարէից՝ 2 և կը համախմբուին Կիւրոսի՝ քրիստոսանուն քագաւորի և Մոզի շուրջը՝ անորէն Բարեխոնէն վրէժ լուծելու համար: Պարսից և Հայոց մէջ է, որ անդուստ ի վերուստ կազմուեցան Մոզոց

եռապետական և հզօր դասակարգութիւններ, գրեթէ թագաւորական իշխանութեամբ, ինչպէս ցոյց կու տան մեզ Ագաթանգեղոս և Զենոր Գլակ՝ Տարօնի Պատմութեան մէջ. և ըստ Թէոդ. Նէօլդէկէի (Gesch. der Perser und Araber, s. 450): Պարսից և Հայոց Պարթև - Արշակունի թագաւորներն իսկ կը պարապէին մոգութեամբ և աստեղարաշխութեամբ, այնպէս որ հռովմէական կայսրն անգամ Ներոն՝ ըստ վկայութեան Տակիտոսի՝ 3 Հայոց Տիրիթ (Tiridate) թագաւորէն կ'ուսանէր այդ արուեստը: Պարթևաց հարստութեան վերջին թագաւորն իսկ՝ Արտաշան Գ. Քրիստոսի թուականին Գ. դարում ղեռ այդ արուեստով կը պարապէր, և աստեղարաշխութեամբ գուշակելով իր աղէտալի մահը, քաջութեամբ կը զիմազրաւէր Արտաշրի, ըստ յուն. Ագաթանգեղոսի և այլոց պատմագրաց:

* * *

Արդ՝ բոլոր այս և ասոնց նման դեռուրիշ գրոյցները, զորոնք զանց ըրինք համառօտութեան համար, ցոյց կու տան մեզ՝ թէ Քրիստոսի ծննդեան ժամանակ երկրպագութեան եկող Մոզերն ևս այդ երեք աշխարհներէն էին, որոնց վրայ կը տիրէին Պարթևազն կամ քեռուրածին թագաւորներ, զորս կեղծ Եպիփանը «թագաւորը Գոգայ և Մոգայ» ևս անուանած է: Եւ այս բանիս կարելի է միայլ ապացոյց համարել և՛ այն պարագայն, որ այդ աշխարհաց և ազգաց երեք թագաւորները՝ Զանտուն, Աշրա և Արևն իրարու նարսզատ կամ եղբայր ևս կոչուած են, իբրև նշանակ մերձաւոր ազգակցութեան, ինչպէս յառաջագոյն անոնց նախորդները Արշակ Մեծ և վաղարշակ և վերջէն ալ Արտաշան Գ. և

1. Տես Հ. Գ. Ինճիճեան, Հնախ. հտ. Ա. էր. 286 - 290, հտ. Գ. 43, 44:

2. Եսայ ԽԵ. 1: Զար. Գ. 8, Ա. Եզր. Բ. 2:
3. Տես Annales, lib. XVI.

Մեծն խոսրով եղբայրակիցը անուանուած են մի և նոյն պատճառաւ:

Մէկ բան մը միայն դժուարահաւատալի կ'երեւի մեզ այս զրոյցիս մէջ. այս ինքն՝ կարելի՞ բան է որ տասուերկու բիւր զօրօք և պատրաստութեամբ այդքան թագաւորներ Պարսիսին եկած ըլլան և պատմութիւնը բոլորովին լրած ըլլայ անոնց մասին:

Այս դժուարութիւնս անշուշտ տեսնելով նաև զրոյցիս հեղինակը, ուզած է զայն հաւատարմացնել՝ կապելով զայն կրկին ուրիշ դէպքերու հետ, այն է՝ Օգոստոս ինքնակալին ըրած տիեզերական աշխարհագիրն, որու համար ոչ միայն հրամաններ, այլ նաև դեսպաններ զրկուեցան առ ամենայն իշխանս և հարկատու թագաւորս Պարսից, Պարթևաց, Հայոց, Հնդկաց և այլն. և երկրորդ արտասովոր աստղին երևումն և Յիսուսի ծնունդը մի և նոյն ժամանակ՝ մէկ կողմէն՝ և միւս կողմէն ալ Արգարու գահակալութիւնը յիշեալ ազգաց և զօրաց օգնութեամբ: Այս բաներս որչափ որ բնական են և պատմական, բայց չեն համապատասխաներ կարծես Աւետարանական պատմուածքին, որ քաղաքականէն տարբեր պատճառ մը կուտայ Մոգուց գալստեան և երկրպագութեան: Հետևաբար՝ ինձ աւելի հաւանական կը թուի ըսել, թէ նորածին Յիսուսին երկրպագութեան եկողներն ոչ թէ յիշեալ ազգաց թագաւորներն էին՝ որոնց անուանըը մեզ յայտնի են, այլ կրօնական դասակարգութեանց գլուխներ, կամ լաւ ևս Մովսէսեան Մովսէսները (— Մոգերն). որոնք՝ ինչպէս ըսուեցաւ՝ թագաւորական պատիւ ունէին: Այս կը տես-

նուի նաև անոնց կրած օտարտի անուններէն, որոնք աւելի կրօնական նշանակութիւն ունին ընդհանրապէս. իսկ ի մասնաւորի Արևն էր — ըստ վկայարանութեան Ս. Բարդուղիմէայ — Մոգուց երկրում պաշտուած աստուածութիւնը, որուն պաշտօղքն ալ կը կոչուէին մինչև ժԱ. — ժԲ. Գար Արևորդիք¹: իսկ Արշաւիրն էր Բաբելոնի թագաւոր՝ ըստ Գանիէլի մարգարէութեան, որ սակայն Եպիփան կիպրացոյն վերագրուած մի ուրիշ զրութեան² մէջ՝ Հայոց Տիգրան թագաւորին և Արգարու իսկ ժամանակակից համարուած է ընդհակառակն. և նոյն իսկ առաջնոյն ձեռքով սպանուած: Բ. ինչպէս Արգարու դարձը՝ Աղդէի, այսպէս և Մոգերուն որ Բարդուղիմէոս առաքելոյն ձեռքով եղած կը պատմուի³, — յիշեալ վաւերական և հնագոյն վկայարանութեան մէջ, — զայս կը հաստատեն. այնու զի պատմութեան մէջ սակաւադէպ է մուշուսնդն կրօնապետներու՝ այսպիսի յօժարակամ և դիւրին դարձն ի քրիստոնէութիւն: Այս բանս ուրիշ կերպ չի կրնար մեկնուիլ, բայց եթէ ըսել, որ ստուգիւ զոցս մէջ պահուած էր Մեսիային կամ Աստուածորդոյն մարդանալու աւանդութիւնը դարուց ի դարս. և թէ մանաւանդ ի ծննդեանն զալով յերկրպագութիւն, ականատես եղած էին արդէն Յիսուսի աստուածութեան. և յետոյ լսելով յԱռաքելոյն նաև անոր մահը և փառաւոր յարութիւնը՝ սիրայօժար հրաժարեցան ոչ միայն ի սնտի պաշտամանէն, այլ նոյն իսկ իրենք եղան քարոզ և տարածող սուրբ հաւատքին յարեալս:

Յոյժ նշանաւոր է և շահագրգիռ Մոգուց երկրպագութեան զալու մասին հայ-

1. Տես Գր. Մագիստրոս, Թոռդք. Ն. Ծնորհալի. Զնոր. Պատմ. Տարծոյ, և այլն:
2. Որուն խորագիրն է. «Երանելոյն Եպիփանու կիպրացոյ ասացեալ՝ Յաղագս նկարեալ տէրունական պատկերին ի Գասառակի սրբոյ»:
3. Զի յես ըսելոյ թէ «Գնաց ի կողմանս Պարսից և Մոգուց... և ի Գողթն գաւառ Հայոց», կը յաւելու.

«Եւ մեծաւ յօժարութեամբ հաւանեցան և լուսաւորեցան մկրտութեամբ աւագանին: Եթող անդ ճոցս երիցունս՝ ի Մոգուց սնտի, որ աշակերտեցան Առաքելոյն. և բազում զօրոչբունս կատարէր Աստուած ի մեռն առանցն այնոցիկ յամենայն տեղիս, ո՛չք եւ հասանէին ոտք ճոցս, եւ զբազումս դարձուցին ի սնտի պաշտամանէն»:

կակա
Ոսկեպ
ԺԳ
ի գր
խորա
կայ
կութի
յԱբր
կեալ
չև յ
յարե
յիև ա
գարի
ւեցաւ
ի քնն
աստղ
սայ ը
սիս:
յստե
այլ ո
րեի
գիրկ
որդի
Տառ
յարս
րեև՝
դա:
Բար
ղքն
թէ զ
մի յ
դերձ
Սամ
համո
գրախ
նէին.
ԺԵ
զման
կառս
անգա
ւայ:

կական մի այլ աւանդութիւն : Մեր Ե. Ոսկեփորիկին (Թիւ 176) մէջ, — գրուած ժԳ — ԺԵ. դարում, — « Ժողովեալ բանք ի գրեանց և ի վարդապետացն Հայոց » խորագրեալ զլսուն մէջ (Թղ. 290բ) կայ հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնն՝ այսպէս. « Ուստի՞ են Մոզքն. յԱբրահամու՝ ի Կեկորարայ, որ արձակեալ ի նմանէ՝ կային ի Միջագետս մինչև յեխն յԵգիպտոսէ. և ապա չոգան յարեւելս, և յարեալ ի Պարս՝ րազաւորեցին ակոյ : — Ո՞րպէս եկին. զԲարամու մոզորիւնն ունեիկն. և յորժամ աստղն երեւեցաւ, իւրեանց արուեստ էր՝ ժողովեցան ի քննել. և տեսին այլ ձև, վասն զի աստղ ի գիշերի երեկ, իսկ նա ի տուէ. սայ ընդ հարաւ ընթանայ, նա ընդ հիւսիս : Հիւստարց ձեր աղջիկ կայր՝ կոչեցին յատեանն՝ հարցանել. և նա ասէ. Ես այլ ո՛չ ինչ կարեմ տեսանել. բայց և ընկ աղջիկ մի գեղեցիկ, և մանուկ մի ի գիրկն : Եկին և երկու եղբարք, և Մինին որդի. անուանք նոցա՝ պարսկերէն՝ Յովաք, Տատուար, Որսխտ. և արար յեզուս՝ Բաւրարտ, Բագադիշ, Միսայ : Իսկ քաղիկըն՝ Կաշա, Բարադիշու, Բարադիխուրի : Իսկ այլ լեզուա՝ Մեղրոն, Գասպար, Բարտասար : Յովհան Ոսկերեբան զաստղըն « քանաւոր իմն և խօտն » կոչէ և թէ զի՛նչ նշան երեւէր յաստղն. մանուկ մի յուսաւոր և խաչ ի ձակտոն, որ հանդերձեալ էր խաչիլ : Ուստի՞ էր ոսկին. Սամուէլ՝ Կարմնջաճորոյ հայր, յԱբրահամու տուած ոսկոյն ասէ : ԺԲ՝ գորազախք եիկն. և նոյնքան հազար զօրս ունէին. զօրքն յԱնտիոք քողիկն, և ինքեանք ժԵ արամբ եկին յԵրուսաղէմ : Եւ տեսին զմանուկն ի գիրկս կուսին՝ որպէս ի կառս խաչին. և երկրպագեցին կամ Եանգամ, և կամ Գ, որպէս Յակոբ՝ Եսաւայ : Եւ հինգ ժամ կայր աւուրն : Եւ

աստղն երկու ամաւ յառաջ երեւալ : Եւ Քրիստոս զիշերն ծնաւ. նոքա յայգուցն անդ էին : Քանի՛ կոտորած մանկանցն. — Ռ. ԴՃ. ԿԲ. էին, յութսուն և չորս գեղջէ » :
 Այս վերջին հայկական զրոյցս անով իսկ բաղաւոր է, զի ճանչցեր է ոչ միայն նախորդ հայկական չորս զրոյցները, զորոնք ի սկզբան գրութեանս յիշեցինք համառօտիւ, այլ և Եպիփանեանը. Սակայն մենք բաղաւորով ասորական Livre de Combat d'Adam ի (տես Migne, Diction. des Apochryphes, Tom. I, pag. 387) հետ՝ բառացի կերպով նոյն գտանք : Սոյնը դարձեալ ազգագրական թիւր կու տայ ձեռքեանիս ուրոնելու և որոշելու Մոզքու վերաբերեալ զրոյցներու կրկնակի աղբիւրները :

*
*
*

ՅԱԻԵԼՈՒԱԾ. — Մոզքու զրոյցին հայկական յիշատակարաններն այսպէս ներկայացնելէն հտըր, տեսնենք այժմ նախ թէ անոնց անուանքն ի՛նչ աղբրս ունին արեւելեան և արեւմտեան ուրիշ ազգերու գրականութեան մէջ պահուած անուններուն հետ : Երկրորդ՝ թէ ի՛նչ և ինչպիսի՛ հնագոյն աղբիւրներէ յառաջ եկած են :

Մոզքու ելրեակ թուով զրոյցն գրեթէ ընդհանուր է թէ՛ արեւելեան և թէ՛ արեւմտեան գրականութեան մէջ, բայց ըստ անուան կամ ըստ ձայնին մեծապէս կը տարբերին իրարմէ : Առ Եբրայեցիս՝ կը կոչուին Մագալատ = Magalat, որ կը նշանակէ նուիրակ, Գալգալատ = Galgalat, այն է՝ բարեպաշտ. Սարաքիմ = Sarachim, այսինքն է շնորհք :

Առ յոյնս յորջորջուած են Ապելիոս = Apellius, այն է հաւատարիմ. Ամերոս = Amerus՝ խուսարն. Դամասկոս = Damascus՝ որ է ողորմած :

1. Այսպէս կ'աւանդէ Չաքարիաս Քոնստանդնուպոլսեցին (MSL. (LXXXVI. p. 83), իսկ Պետրոս Կոմնեսոր, որ 1170ի մօտերը կ'ապսէր, այդ անուանքն յունարէն

կը համարի (MSL. IICC. pag. 1542) ընդ հակառակն, և չաջորդ անուանքն որ ստուգիւ յունական են՝ իբր և զիպտարէն կ'աւանդէ, որ չէ ուղիղ :

անունն
 նշանա
 իսկ ի
 արսևու
 երկրում
 ն պաշ
 — ժԲ.
 էր Բա
 մարգա
 ն կիպ
 զրու
 գաւորին
 համա
 իսկ ա
 ինչպէս
 պէս և
 արեւոյն
 յիշեալ
 ութեան
 նու զի
 է մոլե
 յօժա
 տնէնու
 կրնար
 իւ դոցա
 մ Աստը
 ութիւնը
 անդ ի
 ն, ակա
 սի աս
 Առաքե
 ռոր յա
 ցան ոչ
 սյլ նոյն
 արածող
 ին Մո
 ին հայ

լուստորե
 նոցա երի
 Առաքելոյն
 ի մեռն ա

անեկին ոտք
 տամանեն » :

Ըստ հիթովպացիերէն «Ազամգրքին» կոչուած են՝ Հոօ = Hor՝ իբր թագաւոր Պարսից, Բասատեր = Basâter, թագաւոր Սարայ, Կարսուդան = Karsudan թագաւոր Արեւելից (տես H. Ewald a. a. O., pag. 136):

Պարսկերէն լեզուով կոչուած են, — առանց ազգի և աշխարհի, — Վեհ-ամեա = Beh-âmed, այսինքն՝ ուղամբ եկեալ. Զուտ-ամեա = Zûd-amed, փոյթ եկեալ. կամ երագահաս. Դուրուս-ամեա = Durust-amed, ի դէպ եկեալ (տես Th. Hyde a. a. O. pag. 378; F. Justi pag. 688):

Վրացերէն, — Ժ. դարուն Տփղիս գրուած վրացերէն (գրուգերէն) Զեռագրի մը համաձայն, — կոչուած են երեք թագաւոր մոզերէն առաջինը՝ Վիսկարա = Wiscara, երկրորդն՝ Մելիքոնա = Melikona, երրորդն՝ Վարաստար = Walastar (տես M. Brosset, Notice sur un Manuscrit géorgien palimpseste, ect. St. Pétersbourg 1859, Tom. III, pag. 670):

Աղեքսանդրեան — հելլենական գրականութեան մէջ, — ըստ Excerpta Latina Barbari, — կոչուած են Բիթիսարէա = Bithisarea, Մելիքիոր = Melichior, Գաթասարա = Gathaspa(r):

Առ լատինա և արևմտեանս նման ձայնիւ կոչուած են Մելիքիոր = Melchior, Գասպար = Caspar, և Բաղդասար = Balthasar. և առաջին ներմուծողն Պետա քահանայն եղած է, Զ. դարուն. որ և իւրաքանչիւրն իրենց արևելեան տարազով նկարագրած է. (տես Collecta et flores, Basilea 1563, Tom. III, p. 649):

Առանց ուզելու հոս պարապիլ երեք Մոզուց անուանց իրարմէ այնքան տար-

բեր ձևով գրուելուն և անոնց տրուած ինքնագիւտ նշանակութեանց, կրնանք ըսել՝ որ արևելքէն — հաւանորէն Միջագետքում — ծագումն առեր են, և անտի անցեր են ի Բիթիսանիա և յԱրևմուտս: Եւ դիտելով որ Պետայի (որմէ և լատին անուանակոչութիւնքն Melchior, Caspar կամ Gaspar, և Balthasar) ինչպէս և հայկական նորագոյն յիշատակարանաց ընծայուած Մելքոն, Գասպար և Բաղդասար անուանքն համաձայն են, զէթ ըստ ձևոյն, Աղեքսանդրեան-հելլենական գրականութեան մեզ ընծայած անուանաձևերուն, ուստի ամենահաւանական է ըսել՝ որ վերջինս եղած ըլլայ իբր անմիջական աղբիւր երեք Մոզերու գրոյցին ի փոքր Ասիա և յԱրևմուտս: Իսկ թէ Աղեք-հել. գրականութիւնն ուսկից ժառանգած է, լատ. յայտնի չէ: Բանասէքներէն ոմանք՝ Melchior անունը երբայցերէն ܡܠܚܝܩ-ով կը մեկնեն, այսինքն է՝ րագատր յուտյ: Balthasar քաղցեական անուն է (տես Դանիէլ Ա. 7, Բ. 26, Գ. 5): Իսկ Caspar որ ըստ Ա. Գուտշմիդի՝ է = Gathaspa(r), անզղիացի դրամագէտն Կոննինգամ՝ կը նոյնացնէ հնդիկ-պարթևական Գոնդոֆարեսի հետ, հանելով զայն Գունդափորոս ծանօթ թագաւորի դրամէն. որուն օրով ըստ վկայութեան Legenda Aureaի՝ թովմաս առաքեալն քրիստոնէութիւնը քարոզեց ի Հնդկիս:

Յամենայն դէպս՝ որովհետեւ Գունդփորոսն որ յունական դահեկանաց մէջ Կոնոֆէթոս ևս կոչուած է՝ կը նոյնանայ լեզուարանորէն հին պարսկերէն Vîndafrakամ Vîndafrana անուան հետ. ուստի ամենայն հաւանականութեամբ կարելի է հետևցնել, որ երեք թագաւոր Մոզերու անուանակոչութեանց սկզբնաղբիւրն քաղցեապարսկական եղած ըլլալու է: Նշա-

1. F. L. K. Weigand: Deutsches Wörterbuch. Giessen 1876. Bd. II, pag. 71.

2. Die Königsnamen in den apokryphen Apostelgeschichten; Frankfurt a.M. 1864, Jahrg. XIX Neue Folge, s. 167 und 1879, Jhg. XXXIV, p.

340.

3. A Conningham «Coins of indian Buddhist Satraps, with greek inscriptions, in Journal of the Asiat. Society of Bengal». Calcutta 1855, vol. XXIII. pag. 679.

նաւոր
նակար
թիւնը
1366
բիկն)
շակեց
ծննդե
չէր ի
ազան
դասե
զրոշմ
կեկոյ
սակե,
տա ա
րագա
քոն,
կագրա
ըստ
Ան
պիւս
սակա
քաղց
շակի
Իս
պահ
տալ.
տիպ
հակա
դուի,
թեամ
կան
նմանը
է հո
Միայ
սորակ
տան
Եթով
նուան
(ըստ
sâd,

1. SA
2. TH
sarum
378.
3. J.
II. Fas

նաւոր է առ այս Վարդանայ կամ Վահական Վարդապետի հետեւեալ տեղեկութիւնը (տես մեր թ. 425 Չեռագիրն, այն է 1366 թուականին գրուած ԻԵ. Ոսկիփորիկն)։ «Մոզքն երկու տարով յառաջ գուշակեցան աստեղը, և յերկրորդում աւուր ծննդեան երկրպագեցին Յիսուսի։ Եւ աստղն չէր ի սովորական աստեղաց. և մոզութիւն ազանդի անուն է, բայց եկեղեցւոյ վարդապետը՝ րազաւորք ասեն, և նկարիչը զըռչմեն։ յԱրքաւանու ձեկոյցն ասեն ի կեկոյրայ։ Երկրտասան հազար զօրք կկին, ասեն, և բոյին զօրքն ի վերայ Երկրտայ՝ առ արքային Հայոց, զի սգգայինք էին մեր րազաւորին։ Հայերնե անուանք մոզուցն Մեղքուն, Գասպար, Բարդուսար, և քարյեարեն՝ կազրա, Բաղայիրնա, Բաղայիսարիդա. և ըստ այլ լեզուի՝ այլ ինչ»։

Անտարակոյս գրուածիս հեղինակն Եպիփանեան գրաւոր զրոյցը կարդացեր է. սակայն այսու աւելի բաղդաւոր է, որ քաղզեարէն անուանքն ևս կու տայ որու շակի, որ ցարդ կը պակսէին։

Իսկ գալով հայ գրականութեան մէջ պահուած միւս զրոյցներուն, — այսինքն՝ տպ. երրորդ զրոյցն և Եպիփանեան անտիպ զրոյցն, — ուր Մոզբու թիւն ընդ հակառակն երկրտասանեակ եղած կ'աւանդուի, բոլորովին տարբեր անուանակոչութեամբ, եզական իմն է ստուգիւ։ Յունական և լատին գրականութեան մէջ անոր նմանը չկայ, և հետեւարար՝ անօգուտ է հոն որոնել անոնց սկզբնաղբիւրը։ Միայն եթովպականն՝ ըստ մասին, և ասորականը՝ շատ սերտ աղերս ցոյց կու տան անոնց հետ, գէթ թիւին նկատմամբ։ Եթովպականը կ'ընծայէ մեզ հետեւեալ անուանքը. *Hor, Basâter, Karsudan* (ըստ Ադամգրոց = *Vita Adami*), *Ke-sâd, Albetâr, Aunoson* (տես I. Lu-

dolf: «Lexicon Aethiopico – Latinum». London 1661, unter Albetâr). *Minsuzam, Badsiba, Likon* (տես A. Ant. d'Abbadie: *Catalogue Raisonné des Manuscrits Éthiopiens*, Paris MDCCCLIX, pag. 114). *Mensor, Saïr, Theokeno* (ըստ E. Nestleի a. a. O. pag. 71). Որչափ որ անուանքս իրարու քով հաւաքուած երկոտասանեակ թիւը կը կազմեն, բայց որովհետև իրարմէ տարբեր գրուածոց մէջ կը գտնուին երեք երեք, ուստի կրնան նոյն իսկ երբեակ թիւին պատկանող սկզբնաղբիւրէն առաջ եկած ըլլալ, և հետեւարար տարակուսական։

Իսկ ասորի գրականութեան ազգագրական հեղինակներն, օրինակի աղագաւ, Թէոդորոս Բար Կոնի (= Theodorus Bar Kônî¹) եպիսկոպոսն յամին 893, Բար Բահլուլ (= Bar Bahlûl²) († 965), Միքայէլ Մեծն (Michel le Grand³) 1166 – 1190ին, Գիոնիսիոս Բար Սալիբի (= Dionysios Bar Salibi⁴) 1171ին, Սողոմոն Բասրացի (= Salomon de Bassora⁵) 1222ին, աւելի նշանակալից են։ Ժամանակագիրներէս առաջինը, երրորդն և հինգերորդը՝ կրկին անուանացանկեր կը ներկայացնեն մեզ, այս ինքն՝ հայր անուանեալ թագաւոր Մոզբուն և անոնց որդիներուն, զորոնք Գոկտ. Հուզոյ կէհրէր՝ ասորի բնագրօք և գերմ. թարգմանութեամբ զիմացէ զիմաց զրեր է իւր դեռ նոր ի լոյս ընծայեալ գովելի գործին Ա. հտր.ի 72–73 էջերում, համեմատական սիւնակներով. իսկ միւսներն՝ մի մի անուանացանկեր։ Սողոմոն Բասրացւոյ առաջին ցանկով ներկայացուած Մոզբու անուանքն՝ թէպէտև արեւելեան՝ գրեթէ ամէնքն ևս յունական վերջաւորութիւն ունին, այսինքն *es* և *us*. իսկ երկրորդին՝ ամէնքն ևս իով կը վերջա-

1. Տես «Buch der Scolien» առ. Չեռ. անտիպ.
2. Th. Hyde, Hist. Religionis Veterum Persarum eorumque Magorum, Oxonii MDCC, pag. 378.
3. J. B. Chabot: «Chronique. Paris 1900, Tom. II. Fasc. 2. pag. 141.

4. In Evang. in «Corpus Script. Christia. Orient. Script. Syri, Romæ MDCCCXVI, tom. XCVII, Fasc. 1, pag. 68.
5. Տես S. Assemani: Bibl. Orient. Tom. III. pars. 1 pag. 316.

նան, — ի բաց առեալ Chosroae և Bal-
dad անուանքն, — նման Ասորեստանեայ
և Խալդեան արձանագրութեան անուանց,
և կամ վրացերենի. և հետևաբար աւելի
հին աղբիւր մը մասնանիշ կ'ընեն: Բ. Գի-
տելու կէտ մ'ալ այս է Սողոմոնի առա-
ջին անուանացանկի նկատմամբ, այսինքն՝
առաջին չորս անուանքն՝ Zarvandades,
Hormisdas, Gusnasaphus, Arsaces,
որոնք ոսկի կ'ընծայեն Յիսուս մանկան,
կը համապատասխանեն ասորերէն «Spe-
lunca Thesaurorum» ի մէջ Պարսից
Թագաւոր Որմիզ Մախոզդեանի = Hor-
mizd de Makhôzdi: 5°, 6°, 7° և
8° ըզն, այսինքն Zarvandades, Orrhoes,
Artaxestes և Estunabudanes որ զը-
մուռն կ'ընծայեն, կը համապատասխանեն
Սարացի Թագաւորին Յազկերտի = Jez-
digerd. իսկ 9°, 10°, 11°, և 12° ըզն,
այսինքն՝ Մարուրոս = Maruchus, Ա-
սուերոս = Assuerus, Սարդապարոս =
Sardalachus, և Մերոդարոս = Mero-
dachus ոյք խունկ կ'ընծայեն, կը հա-
մապատասխանեն Սերայի Թագաւոր Պե-
րոզի = Pêrôz:

Արդ՝ զիտելով քաջ որ ասոր. «Spe-
lunca Thesaurorum» ի մէջ բերուած ե-
ռանուանքն՝ Սասանեան ծանօթ Թագա-
ւորներ են, տարակոյս չկայ որ պարսկա-

կան նորագոյն աղբերէ մը յառաջացած
են: Իսկ միւս 12 անուանքն որ մասամբ
մարապարսիկ, և մասամբ ալ քաղղեա-
պարթեակական են, զատ և հին աղբիւրէ մը
հանուած են, համաձայն Ս. Գրոց Եօթա-
նասնից կամ Վուլգատայի Թարգմանու-
թեան յերիւրեալք:

Ասորական միւս անուանացանկերն ևս
որչափ որ ինչ ինչ յորջորջումներով ի-
րարու կը համաձայնին, սակայն ընդհա-
նուր աննելով՝ իրարմէ մեծապէս կը տար-
բերին. զի ոմանց մէջ բարեւա — պարսկա-
կան, և ոմանց ալ պարթեւ — արշակունի
անուանքն զգալի են: Հայկական Բ. և Գ.
գրոյցներուն մէջ պահուած 12 Մոզուց
անուանացանկքն ասոնցմէ ոչ միոյն հետ
աղերս չունին բնաւ. այլ իրենց նոյնայանգ
վերջաւորութեամբ կարծէք թէ մի միայն
ազգի և լեզուի յատուկ ըլլան, թէպէտև
ինչպէս այդ լեզուին՝ այսպէս և աղբեր
համար չենք պնդեր որ բացարձակօրէն
աւելի պարթեակական ըլլան՝ քան քաղղեա-
կան. և այս պատճառաւ իսկ ձեռնհաս
բանասիրաց ուշադրութեան արժանի: Իսկ
Եպիփանեան ծանրակշիւր գրոյցին մեզ ըն-
ծայած անուանացանկին՝ ասորականին
հետ ունեցած աղերսը ցուցնելու համար,
ղնենք զայն ի միջի Th. Bar Kônîի և
Միքայէլի անուանացանկերուն.

TH. BAR KÔNÎ	ԵՊԻՓԱՆ	ՄԻՔ. ԱՍՈՐԻ	
1. Zarwandâd	Չանտու (որդի Ար- տունայ)	Dahdnadur	որդի Artâbanի
2. Hurmizd	Արևև	Wastaph	» Gudpirի
3. Gušnasp	Չուազ	Aršak	» Mahdouqի
4. Erôšakh	Չարիհոս	Zerwand	» Waroudoudի
5. Zarwandâd	Աշտան կամ Աշտթան	Arwâh	» Kosrauի
6. Erjâho	Մարգազ	Artahšîst	» Holitի
7. Artahšîst	(Իսերենեգրովի)	Eštanboudan	» Sišrawanի
8. Estad n'budn	Ահիշրախ	Mahdouj	» Hawahmի
9. Mahroq	Տարսնայ	Ahširesš	» Sahbanի
10. Ahširesš	Մարեհի	Sardanah	» Buldanի
11. Sîdh (Sórdola- chus)	Արտասիզ	Mardouk	» Bilի
12. Mardoq	Աշիր	Pir-Sabour	(առաջնորդ Մոզուց)

Բ.
Աշրաւ
Աշար
Մարի
նակ
սերեզ
մունք
զի Բ.
ուսաի
ունին
ղութի
կան
մառոս
բաւա
թեամ
Հայ
շանա
որ ա
սորի
մոնի
Bk. Z
= D
= Ե
Ds. I
= Ե
B. Bl.
= Ե
= Bl
bûzo
Estar
B. Bl.
Mich
Achs
Bk. Z
Ահիշ
dûk
Mah
Մարի
= Th
1. S
2. Մ
յիշու
ծիւր
սացի

Բ. օր. այն է հնագոյնն ունի՝ Զանտուն, Աշրաւ, Արեւ, Զուազ, Զարնու, Արաաշիզ, Աշորան, Մարազ, Անիշրան, Տարունան, Մարխի, Աշիր: Իսկ Գ. օր. ունի փոխանակ Մարեհի կամ Մարխի՝ Մարնի: «Իսերեզրոկի» ընդօրինակութեան սխալմունք կամ աղաւաղութիւն մ'ըլլալու է, զի Բ. և Գ. օրինակաց մէջ կը պակսուուատի անոր փոխանակելի է Աշրաւ՝ զոր ունին սոյն օրինակներն: Նոյնպիսի զիտողութիւններ կարելի էր ընել նաև ասորական անուանացանկերուն վրայ. բայց համառոտութեան համար զանց կ'ընենք, բաւականանալով հետեեալ համեմատութեամբք:

Հայերէն բնագրոց տարբերութիւնքը նշանակելէն հտքը, այժմ կարող ենք ըսել՝ որ անուններէս շատերը կը նոյնանան ասորի բնագրոց հետ: Եւ ստուգիւ, Սոդոմոնի Ա. ցանկի Zarwandadesը, = Th. Bk. Zarvandâdը = B. Bl. Zerwand = Ds. Zodonad = Mich. Zerwand = Եպ. Զանտունի: B. Bl. Hadûndad = Ds. Hidondad = Mich. Dahdnadur = Եպ. Տարունայ: Sl. Artaxestes = B. Bl. Artachshâst = Bk, Artahsîst = Եպ. Արաաշիզ: Sl. Estunabudânes = Bk. Estadn'budn = B. Bl. Eshtanbûzon = Ds. Ashtonbozan = Mich. Estantudan = Եպ. Աշորան (- Զուազ): B. Bl. Shethâph = Ds. Shethoph = Mich. Waštaph = Եպ. Աշրաւ: B. Bl. Achshires = Ds. Abirosh = Th. Bk. Ahšires = Mich. Ahšires = Եպ. Անիշրան: Sl. Maruchus = B. Bl. Mahdûk = Th. Bk. Mahroq = Mich. Mahdouq = Եպ. Մարխի կամ Մարհի, Մարխի: B. Bl. Arihu = Ds. Arihu = Th. Bk. Erjaho = Եպ. Զարնու, Զա-

րինու: Mich. Ariwa = Եպ. Արեւ: Sl. Assuerus = Եպ. Աշիր: Ուստի՝ ինչպէս կը տեսնեն ընթերցողը՝ երկու անուն կը մնան միայն հայկ. անուանացանկիս մէջ, այն է Զուազ և Մարազ, որ կը մնան դուրս, միւսներն առ հասարակ կը նոյնացուին ասորացանկերու անուանց հետ. և անոնց պատճառն ալ ասորի և հայ բնագրոց խանգարման մէջ որոնելի է: Արդ՝ երկուստեք անուններու նոյնութիւնն իբրև ստոյգ և զրական իրողութիւն նկատելով, կը հետևի ուրեմն, որ կամ երկոտասան Մոզ թագաւորներու ասորի և հայ զրուցին հասարակաց աղբիւր մ'եղած է, կամ հայն՝ ասորոյն վրայ յերիւրուած, և կամ ասորերէնը հայերենի:

Նկատմամբ եզրակացութեանս առաջին կէտին՝ զիտել կը տրուի, որ Պետէր Աբէլարդ առիթ ունենալով գրել Սոդոց երկրպագութեան վրայ, մատնանիշ կ'ընէ՝ իր ընթերցողներուն «Գիրք Սեթայ» անվաւեր գրութիւնը, և իբրև անկէ առած կը խօսի՝ երկոտասան թագաւոր Մոզերու վրայ: Սակայն մեր զիտցածին համեմատ՝ նախ որ Հին և Նոր կտակարանաց Անվաւեր գրութեանց ոչ միոյն մէջ այժմ չի գտնուիր այնպիսի պարագայալից և ոճով պատմութիւն մը, ինչպիսին կը ներկայացնէ մեզ կեղծ Եպիփանի «Ի սկզբնագիր արարածոց» ևն հայկական խմբագրութիւնը: Եւ եթէ իրօք գոյութիւն ունեցած ևս ըլլար այն, անշուշտ Պէտայէն սկսեալ արեւմտեան հնագոյն մատենագիրներ ևս օգտուած պիտ' ըլլային անկէ. մինչդեռ ասոնք ամէնքն ալ երբեակ Մոզերու զրոյցը միայն կը ճանչնան: Ապա ուրեմն հիմնաւոր կոուան մը չկայ ասորական՝ կամ երբայական հասարակաց աղբիւրի մը գոյութեան:

1. S^{hu} Mst. CLXXVII, pag. 13.
2. Մեք. Ասորի. Chron. ed. Venise. pag. 89, յետ յիշելու Եւսեր. Կեսարացոյ և Գր. Նիսացոյ կարծիքը Սոդոց մասին, ապա կը յարէ թէ Յակոբ Եղեասացի տոմարին զիրք մը յօրինած էր, որ կը պատմէր

թէ, երկրպագութեան եկող Մոզերն սեմական ցեղէ էին. և թէ այն զիրքէն հանած էր ինքը վերը մէջ բերուած 12 Մոզերու անուանացանկը: Սակայն Յակ. Եղեասացոյ այսպիսի գրուած մը ցարդ յայտնուած չէ, և Ասսեմանի իսկ ընաւ յիշատակութիւն չընէր անոր: Բ.

կարելի չէ դարձեալ՝ որ հայերէնն՝ ասորի յիշեալ ժամանակագիրներէն թարգմանուած ըլլայ. վասն զի նախ որ անոնց ամենէն աւելի երէց է ժամանակաւ, ինչպէս ցոյց կու տան Եպիփան Կիպրացոյ անունն, և գրութեանս լեզուին և շարադրութեան մաքրութիւնն, որ Զ. դարու առաջին կէսէն Է. դարուն յատուկ կը տեսնուին: Բ. Յիշեալ ասորի հեղինակներու աւանդած զրոյցներն իսկ՝ համեմատութեամբ Եպիփանի ճառին՝ կցկտուր և համաոտ բաներ են:

Ուստի՝ կը մնայ ընդունիլ, ըստ իս, իրրև ամենահաւանական վերջին կէտը, այսինքն թէ Եպիփանի հայկ. խմբագրութիւնն պէտք է որ եղած ըլլայ, հասարակաց աղբիւր ասորի ժամանակագրաց: Եւ այս բանիս ունինք երկու հաստատուն կոտաններ. Ա. Միքայէլ Մեծն՝ իր ժամանակագրութեան յիշեալ տեղում 12 Մոգերու անուանքը դնելէն ետքը՝ կը յաւելցնէ իր կողմէն. «Il y en a qui reculent le voyage des Mages deux mois après la naissance de Jésus-Christ; mais ceux qui sont dans le vrai, affirment que les Mages, avertis deux ans d'avance (l'apparition de l'étoile, se mirent en route et arrivèrent (à Bethléem) le lendemain de la naissance du Christ», ect: Արդ

Եպիփանեան զրոյցի մէջ ևս մի և նոյն բանը աւանդուած է «Որ զամիսս երեքտասան յուղի անկեալ գային» բացատրութեամբ, վարդապետաց մէջ շրջող երկու տարբեր կարծիքն ևս յառաջ բերելով: Բ. Աւելի զօրեղ փաստ մ' է Այլևն զուտ հայկական՝ անուան գոյութիւնն՝ ասորական զրոյցի մէջ, որ ուրիշ կերպով չմեկնուիր, բայց եթէ ըսել՝ որ հայկական զրոյցն սկզբնաղբիւր եղեր է ասորականին: Եթէ չեմ սխալիր՝ Բ. դարու հայազգի ժամանակագրին Գիոն. Թէլմահարցոյ՝ ևս ծանօթ էր հաւանօրէն Եպիփանեան յիշեալ գրութիւնը:

Մեր խօսքը դեռ չկնքած, կրնանք ըսել այժմ, թէ կը սխալի Հուգոյ Կէհրէր² երբ կը հետեցնէ, թէ Մոգերու կրկնաւանկայ թիւն միայն ասորականին կը թուի յատուկ ըլլալ («Die Zwölfzahl scheint für Syrien spezifisch zu sein): Գրութեանս՝ Եպիփանին վաւերական գործ լինելու կամ ոչ խնդիրը ուրիշ առթի և ժամանակի կը թողունք. իսկ այժմ նկատելով անոր ազգագրական մեծ նշանակութիւնն և կարևորութիւնը, կը հրաւիրենք անոր վրայ եւրոպական գիտնոց ուշադրութիւնը, յուսալով որ այնուհետև յառաջ եկած արդիւնքն նպաստաւոր պիտ' ըլլան նաև Պարթև — Արշակունիներու ծագման և Մ. Խորենացոյ նկատմամբ:

ըստ Յակ. Եղիսացոյ Մոգերն 3,000 հեծելազօրք և 3,000 հետեակօք եկած կ'աւանդուին. մինչդեռ ըստ Եպիփանի 24000 հեծեալք են՝ ուրոյն ի հետեակաց:

1. Տես H. Hübschmann, Arm. Grammatik, V Theil, s. 124.

2. Տես Chronique de Denys de Telmahar, publ. par M. Tullberg, Upsal, 1850.

3. Տես Die Heilige. Drei Könige, in Litteratur und Kunst I. Bd. s. 65.



և նոյն
ս երեք-
ցատրու-
ղ երկու
երեկով:
ևն զուտ
ասորա-
ով չմեկ-
այլական
ականին:
հայազգի
ոցւոյ՝ ևս
եան յի-

նանք ը-
կէհրէր՝
երկուտա-
կը թուի
scheint
h): Գրու-
գործ լի-
առթի և
թմ նկա-
նշանա-
ը հրաւի-
գիանոց
յնուհետև
ւոր պիտ'
ունիներու
ստմամբ :

Telmahar,
in Littera-

